




ԴՊՐՈՑԱԿԱՆ ՁԱՐԻՔՆԵՐ

ԵՒ

ԿԵՂԾՈՒԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

(ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 1906—907 ՈՒՍՈՒՄՆ.
ՏԱՐ. ԽԱՌՆԱԿՈՒԹԻՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ)



Ա. ԷՋՄԻԱՆԻՆ
Տպարան Մայր Աթոռոյ
1908

370
1905-74

045
04-1001

373
7-92

146



սյ

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ ՀՐԱՏԱՐԱԿԻ ԶԻՅԱՆ ԿՈՒՐՏԻ

Սրանով պատիւ ունինք յայտնելու յարգելի ընթերցող հասարակութեան, որ այս բրօշիւրի հրատարակութիւնը դեռ 1907 թ. սեպտեմբերի սկզբներին պիտի լինէր, բայց տպարանատէր պ. Կ. Ափինեանի անճշտապահութեան պատճառով մինչև այսօր ձեռք չուեց տպագրութեան դորձը, չնայելով որ դորձը յանձնուած էր յիշեալ պարոնին յսկիտի վերջերին 1907 թ.

1003
ՀԻՄՆԵՐ

Բրօշիւրի մէջ արծարծուող հարցի հասարակական նշանակութիւնը և նկարագրուած սխառագործութիւնների աղաղակող անարգարութիւնը այնքան կարեւոր են և խոշոր, որ հրատարակիչներս՝ Ղարաբաղի թեմական դպրոցի անցեալ ուսումնական տարուայ ուսուցչական խմբի փոքրագոյն օպպոզիցիա կազմողներս՝ աննպատտ պայմանների առաջ անդամ անկարող եղանք կանգ առնել և ծածկուած պահել մեր ենիչերի մանկավարժների քաջագործութիւնները:

Ի նկատի ունենալով այս՝ հրատարակում ենք սոյն բրօշիւրը՝ դիվիդ ունենալով «Լաւ է ուշ» քան երբէք»:





Ստորագրողը պարտավորվում է պահպանել և օգտագործել գրքերը, որոնք նրան հանձնվել են, և վերադարձնել դրանք համապատասխան ժամկետում։

Եթե ստորագրողը չի կատարում այս պարտավորությունը, ապա նա պարտավորվում է փոխարինել հարկադրաբար վերադարձված գրքերը։

Ստորագրողը պարտավորվում է պահպանել և օգտագործել գրքերը, որոնք նրան հանձնվել են, և վերադարձնել դրանք համապատասխան ժամկետում։

Ստորագրողը պարտավորվում է պահպանել և օգտագործել գրքերը, որոնք նրան հանձնվել են, և վերադարձնել դրանք համապատասխան ժամկետում։

Եթե ստորագրողը չի կատարում այս պարտավորությունը, ապա նա պարտավորվում է փոխարինել հարկադրաբար վերադարձված գրքերը։

Ստորագրողը պարտավորվում է պահպանել և օգտագործել գրքերը, որոնք նրան հանձնվել են, և վերադարձնել դրանք համապատասխան ժամկետում։

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք.

Ի նկատի առնելով պարզեցական շատ օրգանների դադարած լինելը, հրատարակուող մամուլի բացարձակ միակողմանիությունը և մեծ կողմից ի նկատի առնելով խնդրի չափազանց կարևորությունը՝ մենք բարուոք համարեցինք մեր ասելիքը հրապարակ հանել այս փոքրիկ բլանկով։

Մեր նպատակն է սրանով մի անգամ ընդմիջտ պարզորոշ կերպով ընթերցող հասարակությունից ցոյց տալ իսկական ցաւը, որով տանջուել և տանջոււմ են այժմ մեր բոլոր դպրոցները և մասնավորապէս Ղարաբաղի Հայոց Թեմական Դպրանոցը։ Այս ցաւը նոր ցաւ չէ։ Հիմնադրուած է օրից սկսած հայ դպրոցները ազատ չեն եղել խլրած տուժներից, խնդիրներից և միշտ ենթակայ են եղել բախտախնդիր մանկավարժների և հասարակութեան տակաւնք աղայ հողաբարձուների կամայականութեան։

Եթէ մենք ուշի ուշով դնենք լինիք դպրոցական պատմութիւնը — սեւ էջերից զատ հազիւ թէ մխիթալական էջեր հանդիպենք։ Անցեալի պատմութեան նկատմամբ եղել ենք խիստ անտարբեր, իսկ ներկայի վերաբերութեամբ չափազանց անձնական և կրքոտ։ Դպրոցական անախորժութիւնները, անարդարութիւնները փոխանակ իրենց իսկական գոյնով հրապարակի վրայ դնելով՝ անձնական կրքից կուրացած մանկամիտ մանկավարժները և տհաս հողաբարձուները հասարակութիւնը կերակրել են և կերակրում են այժմ իրենց շինծու, թայֆայական գծու հաշիւներով միանգամայն դադանի պահելով հասարակութիւնից իրենց տիրահաւակ գործերը և նրա հետեւանքները։ Եւ ահա այս է պատճառը, որ այսօր մենք չունենք դպրոցական բուն խնդրով հետաքրքրուող հասարակութիւն։

Դպրոցական ուղղամիտ ուսուցիչների և վարիչների դրական գործը դպրոցական խնդրում մինչև այժմ եղել է միայն այն, որ ուսումնական տարրուայ ընթացքում նենգամիտ գործիչների հակադպրոցական արարքները, ան-

ներելի զեղծումները ժողովներում գլխավորապէս և մասնավորապէս մի թուրքիկ կերպով պարտաւելուց և արձանագրել տալուց յետոյ քարուայ վերջում թողել են դպրոցը և հեռացել, առանց յետագայ սերնդին վերահաս վտանգի ճշգրիտ պատկերը տալու, առանց պատմելու, թէ ինչ էր ներկայացնում այդ դպրոցը և առհասարակ ինչ խոչընդոտ արդեւաւիթ հանգամանքներ կաւ յին արդեւաւիթ գործունէութեամբ պարապելու համար:

Այսպիսով իւրաքանչիւր մի անհատ իւր մակերեսային մերկացումներով մինչև դպրոցից դուրս գալն է ջանացել դպրոցը՝ գլխավորեան խորանը մարքել ցեցերից, բայց հէնց որ ոտքը դպրոցի շէմքից դուրս է դրել, դրանով էլ վերջացած է համարել իւր միտքիս: Սակայն ի հարկէ պիտանինքնի կամաւոր կամ ստիպմամբ հեռանալովը իրերի դրութիւնը ոչնչով չէ՛ փոխուել: Ուսման ղեկը կրկին մնացել է մտաւոր անանկներին և անբարեխիղճներին: Կարճ մնացել է ցաւ: հէնց այդ ցեց վարկէներն ու անպիկար գաւաթաբաղնիքները գործունէութեան անմիջական հետեանքը պէտք է համարել այն, որ դպրոցական խաղաղ և անգործ կեանքը հայկական իրականութեան մէջ շատ հալուադիւտ երեւոյթ է և դպրոցական հարցն էլ առեղծուած է մնացել:

Առհասարակ այն բոլոր դպրոցները, որոնք յիշեալ կարգի բանտարկու պրոֆաններով է լեցուն եղել, այդ աւսակ հաստատութիւնները բնաւ աչք չեն բաց արել իւրավորութիւնից: Այլ կերպ լինել չէր կարող: անբարեխիղճներն, խաղաղներն, համբալ զատարեւակիչներն և թոյլերն միակ զէնքը գոյութեան կռուում՝ դա իրերն իսպառնգ դրութիւնն է և իրաւանցումը:

Մի փոքր խաղաղութիւն, լուրջ պարապմունք—առողջ բնադատութիւն և ահա այդ վայրկեանից էլ խորտակուած պէտք է համարել մոլաւոր թոյլերն գերելիս նութիւնը:

Ուրիշեան այն այսպէս է, հետեւեալը և պարագայ անպարման զօրեղ մտապարտիքը թոյլերն հանգիստ չէ տալիս խաղաղութիւնը հաշտութեամբ զիմաւորելու, և այն իսկ պատճառով էլ ալեկոծ դրութեան ջերմ պաշտ-

պանները, քէակցիւ յառաջ բերողները սկզբից և եթ եղել են այդպիսիները և են այժմ: Այս տեսակ խառնակ վիճակ էր և այն ժամանակ, երբ դպրոցները ամբողջովին գտնուում էին կղերականների և կղերատէրների ձեռքին, նոյն դրութիւնը աւելի զօրեղ թափով նկատուում է և այժմ, երբ գերեշխանութիւնը գտնուում է հակադէմա-կանների ձեռքին:

Ուրեմն ի՞նչ տարբերութիւն ներկայի և անցեալի մէջ: Մենք հիմնական տարբերութիւն չենք գտնում: Եթէ կայ որևէ տարբերութիւն, դա ֆակտորների մէջ է: Անցեալում կղերականներն էին դպրոցի տէր համարում, ներկայումս — ըստ երևոյթին հակակղերական բանակը: անցեալում աշակերտական անմեղ ու արդար զայրոյթի բռնկումները զոպելու և խեղդելու համար օժանդակութեան էին հրաւիրում պետական զինուորին, ներկայումս աղգասէր մարտիկին, անցեալում կրթուող սերնդի և պարտաճանաչ դատարարալի իրաւունքները ոտնահարողն էր կղերա-բուրժուական հոգաբարձական բլօկը, այժմ դանադան եարլիկաւոր մութ ոյժեր: Անցեալում կղերատէր ուսուցչութիւնը կղերականութեան զօրեղացման մէջ էր որոնում իւր երջանկութիւնը, այժմ իրեն սցիւալիստ համարող ուսուցչութիւնը—բերտ ու կոպիտ ոյժերի միջոցով աղա հոգաբարձուներին քէակցիօներ գործեր կատարելու մէջ է տեսնում իւր դատարարային ուրոյն շահը: Անցեալում մանուկ սերունդը կրթելու միակ միջոցը հայ ուսուցչից գլխավորապէս համարում էր Աւետարանը և միջնադարեան վարդապետների սխօլաստիկ մեկնաբանութիւնը: այժմ կեղծիքներն և ստորութիւններն մէջ վարժեցնելն է «մօդա»:

Մասնաւորելով մեր խօսքը Ղարաբաղի Հայոց թեմ. Դպրոցի մասին, կատենք, որ յիշեալ երեւոյթները—աներեւակայելի մեծ չափով կան այդ դպրոցում և կաշխատենք փաստօրէն տպացուցանել մեր ասածները:

Սրանով մենք համառօտակի ուրուագծեցինք, թէ ինչը պէտք է կազմէ մեր բոջներն բովանդակութիւնը: Նախ քան բուն նիւթին անցնելը աւելորդ չենք համարում յիշել, որ մեր աւարկութիւնները հիմնուած են լի-

ներու գլխաւորապէս մանկավարժական ժողովի արձանագրութիւնները վրայ և մասնաւորապէս էլ I Մեջնորդ-դատարանի փաստաթղթերը և II Մեջ-դատարանը կազմելու մասին աշակերտները և Մեքընեանի մեմեանց դըրած նամակները և վերջապէս մեր ձեռքը եղած մի քանի այլ պաշտօնական դօկումենտները վրայ:

Հիմք ընդունելով Մանկավ. ժողովի արձանագրութիւնները, այդ տեղից էլ մենք կը կտկսենք:



I.

Մի թոռցիկ ակնարկ ուսուցչական կազմի երեսփոխանի նախնի.

1905—1906 ուս. տարում տիրող կարգերը դէմ կուրէր սկսուած, ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ Ղարաբաղի Հայոց Թեմական Դպրանոցում: Ո՛չ մի դպրոցում այնպէս չօրեղ և ընդարձակ չէր աշակերտութեան բողոքը, որչափ Ղ. Հ. Թ. դպրոցում: Հէնց այդ պարզ պատճառով էլ ո՛չ մի տեղի աշակերտութեան չէ յաջողուում այնպէս շուտափոյթ կերպով ու այնպէս լայն չափով իրաւունքներ ձեռք բերել, ինչպէս այստեղ: Ինչպէս ամեն տեղի աշակերտութիւնը, այնպէս էլ այստեղիներ բաղմաթիւ դառն փորձերից յետոյ եկել էր այն եղրակացութեան, որ դրպրոցի նորմալ կեանքին, յառաջադիմութեան նպաստող ամենաառաջնակարգ պայմաններից մէկն է ինտելլիգենտ, հասուն և հմուտ ուսուցչական կազմը: Հէնց այդ նկատումների հիման վրայ էլ աշակերտական պահանջադրի առաջին տեղում դրուած էր եղել՝ ուսուցիչները պէտք է լինին համալսարանաւարտ մասնագէտներ և ո՛չ մի սեմինարիստ:

Մանուկ սերունդը հազիւ հազ արթնացել էր իւր դարաւոր քնից և հազիւ էր կարողացել միահամուռ ուժերով դիմադրել կղերա-բուրժուական կաշկանդիչ կարգերին: Դեռ նոր նոր էր մարանչող սերունդը ազատուել յետադիմական կղերական փոխակի ճանկերից, դեռ նոր էր կամենում օգտուել իւր նուաճումների պտուղից և ահա մի երկու ամիս յետոյ՝ սեպտեմբերին (1906 թ.) դալիս է սօցիալիստ եարլիկ կպցրած իւր ճակատին մի կօնլլումբրատ ուսուցչական կազմ: Նկող ուսուցչական խումբը թէ՛ իւր ցենզով և թէ՛ որակով ո՛չ միայն չէ համապատասխանում աշակերտութեան վերոյիշեալ պահանջադրին, ընդհակառակը աւելի անպատրաստ ոյժերից է լի-

նում, քան 1903 թ. կաղմը, այսինքն այն ժամանակուայ, երբ դպրոցում տիրապետում էր կղերականութիւնը, 1903 թ.-ին, կղերականութեան և բէակցեայի փայլուն օրերին, երբ աշակերտական բողոք, պահանջ ներկայի իմաստով խաղաղ դոյութիւն չունէր, երբ դպրոցի բիւջէն 14 հազարից վեր չէր բարձրանում, երբ դպրոցը ունենում է տեսչի պաշտօնակատար և ոչ տեղւոյ, այդ ժամանակամիջոցում ուսուցչական խմբի անդամները լինում են 5 համարարանաւարտ, ճեմարանաւարաներ, երկու հատ Ուսուցչական Ինստ. աւարտներ, միայն եւ միայն մի հատ սեմինարիստ: Սակայն այսօր բողոքի բռնկման օրերին, յեղափոխական այս լուրջ մոմենտին դպրոցի ղեկավարութիւնը՝ Տեսչութիւնը յանձնում յայտնի կամադուրի, հօրներին քծնող, երբեմն կղերական, երբեմն լիբերալ, այժմ էլ դաշնակցականացած պ. Ա. Զիլինկարիանին, որի վարչական անհերքելի ընդունակութիւնները (!) մասին էղած փաստերին կրկերադառնանք իւր ժամանակին: Այժմ շարունակում ենք մեր խօսքը խմբի մասին: Արդ, երբ դպրոցի բիւջէն հասել է 22—24 հազարի և 1903 թ.-ից էլ անցել է մօտ 4 տարի, այսօր 1906—1907 ուս. տ. Դ. Հ. Թ. Գ. ուսուցչական կաղմի մէջ կայ միայն երեք համարարանաւարտ, 5 ճեմարանաւարտ, 4 հատ ուսանող, 7 հատ սեմինարիստ:

Ուրեմն ինչպէս տեսնում ենք «համարարանաւարտ, մասնագէտ, ոչ մի սեմինարիստ» պահանջող աշակերտութեան ուսման գեղը և դատելարարական գործը կրկին յանձնում է սեմինարիստներին և աշակերտութեան այս պահանջը, թէ չպէտք է լինի ո՛չ մի սեմինարիստ, դա ո՛չ մեայն չէ՛ իրադրութեամբ, այլ մենչե իսկ աւելի թուով սեմինարիստներ են հրաւիրում, քան թէ կար 1904—1905 ուս. տ. Ներսէս վարդապետի տեսչութեան օրով, պահանջադրի ծննդաբուծեան և կաղմակերպութեան վալլուկեանին:

Հապճեպօրէն ձեռք բերած իրաւունքները այսպիսով խլում է աշակերտութիւնից. վերջինս կամենում է ընդդիմադրութիւն ցոյց տալ, սկսում են աշակերտական ժողովներ ալդ խնդրի առթիւ, սակայն այն համոզմուն-

քը, որ աշակերտութեան մի չնչին մասը հարցին նայում է դուռ խնամիական տեսակէտով, իսկ մի մասն էլ յուսալով, որ պ. Ա. Զիլ.-ի խօսքերի հիման վրայ առաջիկայ ուս. տարում այլ ևս ոչ մի սեմինարիստ չի լինի, դրա համար էլ առժամանակ բռնկումները դադարում են, բայց սա խնդրի ձեւական կողմին էր վերաբերում ի հարկէ, իսկ ինչ վերաբերում է խնդրի բուն էութեանը, այս մասում աւելի քան անբարեկեղծութիւններ է թոյլ տրւում. ինչպէս օրինակ, դասաբաշխութեան ժամանակ, մասնագէտ—համարարանաւարտ բնագէտից բնագիտութեան դասերն առնում տալիս է մի ամիս II կուրսի ուսանող Ասրեանի, որ մասնագէտ չլինելուց պատ, չգիտէ նաև հայերէն կանոնաւոր խօսել: Մի երկրորդ օրինակ էլի դասաբաշխութիւնից: Պատրաստականի շայտց լեզուի դասերը յանձնում է մի ինչ որ նոր գիմնադիւսարտ օր. Ն. Յարութիւնեանի, որը ըստ բարեկամութեան համարում է «Զ.-ի ամենամօտ խնամին»: Մեզ համար բնա՛ ճետաբերք չէ, թէ ով է Շուշանի Յարութիւնեանը, բայց մեզ համար փաստ է, որ Յ տարի մանկավարժութիւն սովորած և հայերէն լեզուին տիրապետող ճեմարանաւարտների խնդրը կարմիր մահաւդի տակը մնաց թաղնուած և այդ պաշտօնի համար հրաւերուեց մի նորաւարտ գիմնադիւսակայ, որը ոչ միայն տեղեակ չէր մանկավարժութիւնից, այլ և աւանդելու էր մի առարկայ, որը սովորելու համար կարելի էր զգում գեռ ինքը: Ապացոյց սրան կարող է լինել այն հանգամանքը, որ նոյն վարժուհին տաքուայ բնթացքում պատրաստուելիս է եղել դպրոցի բարձր դասարաններ չ. լեզուի ուսուցչի մօտ, որպէս զի տարուայ վերջում չ. լեզուի վերջնական քննութիւն տայ Դ. դասարանի կուրսից: Ի հարկէ սրանով չէր աւարտում պ. Զիլինկարեանի անձը, ուստի և մասնների արանքով էր նայում ամեն մի այս տեսակ լուրջ խնդրի վրայ, և սրանով էլ պէտք է բացատրել նրա հակասական և վայրկիւրոյ գործունէութիւնը:

Ա. Զիլինկարեանի և նրա կօնգլօմերաւ խմբի 1906—1907 ուս. տ. մանկավարժական գործունէութիւնը, թէ ըստ բովանդակութեան և թէ ըստ աստիճանի մենք կարող ենք

բաժանել մի քանի շրջանների. ա) Իդէալիզմի և դեմոկրատիզմի շրջան. բ) Գողարկուած տակտիկա. գ) Նկուղային գործունէութիւն. դ) Կեդտերի, այլասերուած մշտութիւն և մօզնի մանկավարժութեան շրջան:

II.

Ա. Իդէալիզմի եւ դեմոկրատիզմի օրջան.

Իդէալիզմի և դեմոկրատիզմի անդրանիկ շրջանը սկսուած է 1906 թ.-ի սեպտ. 12-ից և տևում է մինչև նոյեմբերի 9-ը, դպրոցական այդ հռչակաւոր օրը: Այս փոքրիկ ժամանակամիջոցում, աննկատելի ընդմիջումներով, գումարւում է 16 ժողով և բոլոր ժամանակ խօսուում և ծրագրւում է ուսուցչական մարմնի գործելակերպը և այն բոլոր ղեկավարող սկզբունքները, որոնք պէտք է ի նկատի առնուին դպրոցական—ուսումնական հարցերը որոշելիս: Չոր ու ցամաք օրէնքները խմբագրելու ժամանակ մէջ ընդ մէջ էլ առարկութիւնները ժողովականների կողմից համեմուում են զեղուն զգացմունքներով: Օրերէնքները բովանդակելի լինելը սկզբնական ժամանակներում որքան կասկածելի էր, նոյնքան և դժուար էր դրականապէս ցոյց տալ, որովհետև խօսողները, առարկողները ընդհանրապէս մի քանի հոգի էին, իսկ մատ բարձրացնողները բոլորը: Թէև լուռ մատ բարձրացնելու «սրբազան մեթոդ» շարունակուում է և մինչև ուսումնական տարուայ վերջը, բայց պէտք է խոտտովանել, որ էլի նոյն այդ լուռ մասնակցի զօրութիւնն էր, որ դրական գործին անցնելու ժամանակ յառաջ բերեց դպրոցական բէակցիան, որով պարզուեց այ. Չիլինկարեանի և նրա անլեզու արբանեակների բարոյական սնանկութիւնը, մի բան որ մութն էր շատ շատերի համար, գոնէ և այ. Չիլինկարեանի ծանօթների և բարեկամների համար: Պ. Չիլինկարեանին մօտից ծանօթ մարդիկ, առանց մի բոպէ տատանուելու, կարող են մեզ հետ կրկնել համարձակ, որ նա կադմազուրկ մարդ է, յարմարուող է, բայց որ նա ընդունակ է ամենաստոր կեղծիքներ յօրինելու, փաստաթղթերը կեղծելու,

խաբերայութեամբ պարապելու, դա, գոնէ կարելի է տեսնել, որ թաղնուած մի յատկութիւն էր բոլորի համար: Արտաշէս Մելքոնեանի պատմական մեծ կօնֆլիկտին ենք պարտական, որ երևան հանեց թէ Չիլինկարեանի և թէ մեծամասնական մի քանի պարոնները վարագործուած յիշեալ կեղտոտ ու նողկանքի արժանի յատկութիւնները: Այս տեսակէտից—Մելքոնեանի կօնֆլիկտը իւր համար բացասական կողմերի հետ միատին ունեցաւ և այն դրական կողմը, որ շատ թաղնուած ֆիզիօնօմիաներ պարզեց և այդ պարզաբանութեան մէջ էլ պէտք է որոնել դպրոցի ապագայ բարգաւաճ վիճակը: Եթէ չլինէր այդ միջնադէպը, դուցէ և դժուար նկատելի լինէր այն դուալիզմը, որ գոյութիւն ունէր այ. Չիլինկարեանի և նրա նման դպրոցական գործիչների մէջ:

Անցնելով փաստերին, մենք պէտք է տեսնենք, որ այլ էր այ. Չիլ. նախ քան միջնադէպը և «այլ» էր նրանից յետոյ: Տեսնենք ինչ էր ներկայացնում նա—մինչև նոյեմբերի 9-ը: Իդէալիզմի և դեմոկրատիզմի օրերին էր, երբ ճառում էր, որ դպրոցական գործը ըստ կարելւոյն աւելի բեղմնաւոր և արդիւնաւէտ լինելու համար պէտք է հետու լինել թայֆայական կուսակցութիւններեց և պէտք է ամեն կերպ աշխատել թայֆայական ոգի չմտնկլ դպրոցական գործի մէջ, որովհետև դրա շնորհիւ վնասուում է դպրոցական գործը, վարկաբեկ է լինում ուսուցչութիւնը և իջանում է աշակերտութիւնը: Ի նկատի առնելով այս փաստական եղելութիւնները, աւելացնում է. «Գործի չոր ու ցամաք պաշտօնավարական եղանակը չէ, որ դարկ է տալու նրա յառաջագիմութեանը և բարգաւաճմանը, այլ ընկերական անկեղծ, անաչառ վերաբերմունքը, որով քմահաճոյքն ու ետք արմատախիլ են լինում և իշխում է ընկերվարական—ընկերական ոգին, որ անհրաժեշտ է մի ընդհանրական և հասարակական գործի բարեւաւման համար, ինչպիսին է դպրոցական գործը (Չ. Ժ. սեպ. 22): Նոյն ընկերվարական տեսուչը ժողովում էլ յայտարարում է, որ «Տեսուչը պէտք է հետևի դասերին և այդ հետևողութեան արդիւնքը դադանիւր չպէտք է մնայ մանկավարժական ժողովի համար», կցում է նաև, որ հետևողութիւնը պէտք է լինի

ըստ կարելւոյն խիստ, հետեւողութեան արդիւնքը պիտի մանկավարժական ժողովի քննադատութեան ենթարկուի և «Այս տեսակ հետեւողութեամբ կրկնապէս ճշտելու գիտեցողութեան վստահութիւնը, որը շնորհիւ իւրաքանչիւր որոշում կրում էր միակողմանի և անհատական բնուրոյթիւն (Թ. Ժող. 2 հոկտ.) : Տեսչի չափազանց դեմօկրատ ձևանալուց օգտուելով ժողովականներից մի քանիսը պնդում են, որ «Եթէ տեսուչը կարող է ղեկուցել, նայել կարող են անել մի քանի ուսուցիչներ կամ մանկավարժական ժողովը (Թ. Ժող. 2 հոկտ.) : Ուսուցիչները մի մասի այս ցանկութիւնը համակրութեամբ են ընդունում ոչ միայն Մանկավարժական ժողովի մնացած անդամները, այլ մինչև անգամ ինքը՝ ժողովի նախագահը աւելացնում է, «որ դորժը չպէտք է արգելադրուի դառնայ ընկերականութեան և հակառակը լայն հակողութիւնը իւր բաղմամբի տեսանկեցում անշուշտ կունենայ իւր դրական հետեւանքները. նա կենթարկի ամեն ինչ անաչառ քննադատութեան, որ անհրաժեշտ է դպրոցական գործը աւելի խորը ուսումնասիրելու և բարելաւելու համար» (Թ. Ժողով) : Զեւական դեմօկրատիզմի անմիջական արդիւնքը պէտք է համարել և այն, որ մանկավարժական խորհուրդը աշակերտների վերաբերեալ տեղի ունեցող որոշումները, որպէս թէ, իսկութեամբ ըմբռնելու համար կարեւոր համարեց պատիժների եւ կարգապահութեան վերաբերեալ հարցերը խորհրդածութեան նիւթ դարձնել Մանկավ. ծնողական խառն ժողովում և դպրոցն համարելով ժողովրդական, նախագահը առաջարկում է, որ հասարակութիւնից ցանկացողներն էլ կարող են մասնակցել (Թ. և Ժ. Ժողով) : Նոյն հովերով առաջ դնացող դեմօկրատիական ամենամարտը (!) հոգի ունեցող պ. նախագահ և Կ. ի նկատի առնելով այն հանգամանքը, «որպէս ղի կարելի լինի մօտեցնել աշակերտութեանը ուսուցչական ժամրմն հետ, որպէս ղի այն անջրպետը, որ վաղուց է ստեղծուել ուսուցչի և աշակերտի մէջ, վերացուի և նրան քիտարինէ բարեկամական անաչառ վերաբերմունքը» և ի նկատի առնելով այն, որ Զ-րդ գասարանցիները Թօտիկ ապագայում գործելու են կեանքում և ժողովներից բաւական կօդտուին ու բացի դրանից բարելաւ աղգեցու-

թիւն կունենան վորք աշակերտները վրայ, ուստի խօսքով յառաջագէմ, իսկ գործով յետագէմ Մանկավար. ժողովը որոշում է աշակերտներին թողնել Ծնողական—Մանկավ. ժողովներին «Խորհրդակցական ձայնով» : Կեղծ դեմօկրատիզմով այնքան են քղեւորում պարոնաչը մանկավարժները, որ դեմոնստրատիւ կերպով, գրեթե առաժ դասարանից հեռացող Ա. գասարանցիները խնդրեց աւելորդ են համարում իսկոյն մանկավարժական ժողովում քննել և որոշում է, որ պէտք է յետաձգուի և «պէտք է քննուի, լուծուի Ծնողական—Մանկավ. ժողովում» : Հանրածանօթ. պ. Մեքլըններն էլ, այդ երջանիկ կօնֆլիկտեան նախօրեակի ժողովում խորխալով կրկնում է. «Այն ուսուցիչը, որ արժանի է աշակերտի յանդիմանութեան, թող յանդիմանուի» (Ժ. Ժող.) : Դեմօկրատիական սկզբունքները անթերի և լրիւ լինելու համար ընկերվարական ուսուցչական կազմը իւր ժողովներից մի քանիսում ձառել սկսեց նաև հողաբարձութեան և ուսուցիչները իրաւաբութեան մասին : Է-րդ ժողովում վերջնական քննութիւնների վերացման հարցի մասին լուծուի ժողովը «անհրաժեշտ է համարում այդ խնդրը քննուի և լուծումն ստանայ խառն Հողաբարձական Մանկավ. ժողովում» և կարծիք է յայտնում, որ «Յանկուի է առհասարակ, որ ժողովներում նրանք լինին որպէս ժողովրդի ներկայացուցիչներ և ոչ միայն նրանք՝ այլև աշակերտների ծնողները» : Ստիկստութեան ստրուկ պ. Ա. Տէրտէրեան մի քան դէմն է անցնում. սա «համարելով այդ խնդրը զուտ մանկավարժական—առաջարկեց նախ քննել մանկավարժ. ժողովում, և ապա յայտնել հողաբարձութեան» : Ամէն ինչ ընկերական հող վրայ դրնող պ. Զիլինկարեան, ընդունելով հանդերձ, որ այդ լընդիւրը սկզբունքով մանկավարժ. հարց է, այնուամենայնիւ պնդում է, քանի որ «պէտք է Տեսուչը ղեկուցում տայ խորաբարձութեանը որոշումներին մասին, աւելի լաւ է մանկավարժական ժողովը ղեկուցի» : Ժողովականների այն հարցին, «թէ հողաբարձութիւնը խառն ժողովում լինէ ձայնով պէտք է օգտուի, այս հարցին ևս պ. նախագահ մօտենում է ընկերական տեսակետից. «վերագրելով խառն ժողովի լինելատիւն մանկավ. ժողովին, առարկելով, որ ժողովը պէտք է

տակտով տանել և չպէտք է ծայնի հաւասար լինելու մասին հարց բարձրացնել: Եթէ հոգաբարձուները բարձրացնեն այդ հարցը, ուսուցիչները պէտք է աշխատեն առարկել յօգուտ իրանց իսկ նախագահութիւնն պէտք է անի նա, ով հրաւիրել է խառն ժողովը»: Զուտ դասակարգային կռիւ է կամենում մղել մանկով. ժողովը և այն դէպքում, երբ (XII ժող. 17 հոկ.) ժողովի նախագահը յայտնում է, որ մասնաւոր կերպով հոգաբարձութիւնը ցանկութիւն է յայտնել՝ խառն ժողովներին հարցերը վճռել առանձին քուէարկութեամբ հոգաբարձական և մանկավարժական մարմինների կողմից և անցած համարել այն հարցերը, որ կստանան ձայների 2/3-ը: Այս խնդրի առթիւ ժողովականները յայտնում են այն միտքը, «Որ առհասարակ կան խնդիրներ, որոնց լուծումը պէտք է պատկանի միմիայն մանկով. ժողովին, թէ և հոգաբարձութիւնը ժամանակի ընթացքում յատկացրել է իրան: Քանի որ այդ տեսակի դրութիւնը կարող է միանգամայն խոչընդոտ հանդիսանալ դպրոցական կեանքի նորմալ ընթացքին, անհրաժեշտ է, որ մանկով. ժողով. աշխատի ձեռք բերելու իրան պատկանող իրաւունքները: Այդ տեսակի խնդիրները մէկն է արձակման խնդիրը» ... և որովհետեւ «աշակերտին ճանաչողը ուսուցիչն է և մանկով. ժողովը», հետեւաբար դրա «երաւատութեան պէտք է վերագրել արձակման խնդիրը»: Պ. նախագահը ևս իրաւացի գտնելով վերոյիշեալ նկատողութիւնները՝ շեշտում է, որ «անպայման պէտք է աշխատել, որ այդ իրաւունքը վերադահուի մանկով. ժող.-ին»: Ի նկատի առնելով յիշեալ առարկութիւնները՝ մանկով. ժողովը, այդ խնդրի առթիւ որոշեց յայտնել հոգաբարձութեան, «Որ դա զուտ մանկով. խորհրդի գործ է. եթէ հոգաբարձութիւնը չընդունեց այդ որոշումը—առաջարկել, որ հարցը դրուի խառն ժողովում եւ վճռուի ծայնի 2/3-ով—խառն քուէարկութեամբ»: Դեռ շատերը սրանով չեն բաւականանում և գոռում են. «Կռիւ հոգաբարձութեան դէմ»:

Թէ քանի օր է տեւում այդ դեմագոգիական խաղը և որքան իրական հողի վրայ էին հիմնուած այդ որոշումները, չուտով կանցնենք այդ հարցին էլ:

III.

Քօղարկուած ակնկիւս եւ փոխակերպուած գործունէութիւն.

Իրերի դրութիւնը «այլ» կերպարանք է ստանում նոյն միջերի 9-ից յետոյ: Ընկերական խօսքը, անաշառ քննադատութիւնը, անկեղծ վերաբերմունք—դարձուածների լուր կրկնելն անգամ չի լսում: Կուլեկտիւ գործունէութեան փոխարինում է մասնակին, անհատականը: Նոյեմբերի 9-ից յետոյ բողոքող աշակերտութիւնը դասադուլ է յայտարարում, մանկավարժական ժողով չկայ: Մեքսիկեան Միջնորդ դատարանին դալ չի կամենում և ձգձգում է, դարձեալ մանկավարժական ժողովը լուռ է. վկայ ուսուցիչները Մեքսիկեանին արդարացնելու համար այնպիսի սուտ վկայութիւն են տալիս, որ մանկով. ամբողջ ժողովը վրայ ստուեր է ընկնում, կրկին խումբը անտարբեր է: Մեքսիկեան Միջնորդ դատարանը շեղում է իւր իսկական նպատակից և դպրոցը նորից մասնում է անօրինակ շփութութեան ու իրարանցման—ուսուցչական սօցեալիստ (!) խումբը իւր անուղղակի բացասական աջակցութեամբ աւելի սանկցիւտ է տալիս այդ անլայել արարքներին: Սրանով էլ պէտք է բացատրել այն կերպարանափոխութիւնը, որ առաջին անգամ նկատուի եղաւ փէ-րդ ժողովում: Որքան արամադիր էինք այս ժողովին էլ ընդունել յար և նման մեր նախկին ժողովներին, նոյնքան աչքի էր ընկնում այս ժողովի տեսնեցնիւթ ընաւորութիւնը: Թարմ էին դեռ մեր յիշողութեան մէջ այն բոլոր որոշումները, որոնք միաձայն անցել էին նախընթաց ժողովներում: Մենք մասնակցում էինք ժողովին այն ժամանակ, երբ ծնողների մասնակցութիւնը մանկավարժական ժողովներին համարւում էր անհրաժեշտ մի պայմայն «աշակերտի վերաբերեալ տեղի ունեցող որոշումները իսկութեամբ ըմբռնելու» (ժ. ժող. 3 հոկտ.): Մենք ներկայ էինք այն ժողովին, ուր մանկով. ժողովը, աշակերտի արձակման խնդիրը համարելով զուտ մանկավարժական որոշեց յայտնել հոգաբարձութեան, «որ դա զուտ մանկով. խորհրդի գործ է, եթէ հո-

գաբարձութիւնը չընդունեց այդ որոշումը, առաջարկել, որ հարցը դրուի խառն ժողովում և վճռուի ձայներէ 2/3-ով, խառն քուէարկութեամբ» (XII. 17 հոկտ.)։ Մենք էինք այն ժողովում, երբ մանկավ. խորհուրդը կարևոր համարեց պատիժների եւ կարգապահութեան վերաբերեալ խնդրերը «խորհրդագծութեան նիւթ դարձնել ծնողական մանկավարժական խառն ժողովում» (ԺՎ. Ժող. 20 հոկտ.)։ Մենք էլ էինք ժողովի անդամ և այն ժամանակ, երբ որոշուեց թողնել աշակերտներին ներկայ լինելու ծնողական մանկավարժական պատժական ժողովներին (ԺՁ. Ժող. 5 նոյ.)։ Մենք էլ կայինք այն ժողովում, երբ արժարժուում էր այն աեսակէտը, թէ՛ աշակերտներին վերաբերեալ ամեն մի խնդիր պէտք է դրուի ծնողական—մանկավ. և հոգաբարձական խառն ժողովներում (ԺՁ. Ժող.)։ Մասնակցում էինք և այն ժամանակ, երբ ժողովը «Ա. դասարանցիները դեմօսաբարտելով ցոյցի գտնելով քննութիւնը որոշեց թողնել ծնողական մանկավարժական ժողովին» (ԺՁ. Ժող. 5 նոյեմբ.)։ Այս բոլորից յետոյ էլ տեսել էինք, թէ ինչպիսի անտարբերութիւն և դժկամակութիւն էր ցոյց տալիս խումբը դէպի բողոքաւորները պահանջը և ի. դասադուրը։ Այս աեսակ անտարբերութիւնից յետոյ չէր կարող աչքի չընկնել այն միտումաւոր փութկոտութիւնը, որ ժողովը նախագահը ցոյց տուեց ԺՎ. Ժողովը գումարելու ժամանակ։ Ամբողջ զպրոցը 2 շաբաթից աւել էր՝ տակն ու վրայ էր լինում, բուռ էր պատուական նախագահը, բայց հէնց որ մի ինչ որ աղաւ աւանդիւր Հայրենանի (խօսք չկայ, որ Մեղքոնեանի պաշտպաններից էր սա) տուր ու գմբոցի խնդիրն է մէջ գալիս, առանց բոլի անգամ կորցնելու, ժողով է գումարում և պնդում է, որ «Անհրաժեշտ է մի բան որոշել եւ յանձնել հոգաբարձութեան և յայտնել աշակերտներին, որ նոյնանման դէպքերում ինչպէս պէտք է պատժուին նորա»։ Աշակերտութեան փայտաշող և շայտ մեծապատիւ պ. նախագահը չի ամաչում անգամ իր երէկուայ փքուն որոշումներից և գողտրիկ ու գուրեկան ածականներից, այսօր էլ այն կարծիքին է, «որ աշակերտները սանձարձակ են, եւ եթէ այդ երեւոյթի առաջը չստիպի, հետեւանք վաւ կը լինի»։ Բոլոր ժամանակ խօսակցութեան թելը պար-

տում է այն տեղ, թէ Հայրենանի հետեւում էին Մուսալեխան. Բարադաման. Սողոմոնեան. Յովհաննիսեան եւ Արզումանեան։ Ի հարկէ անժանօթ ընթերցողին մի փոքր ինչ անհասկանալի կը լինի թէ ինչու այս անունները շատ են գրաւում պ. Չիլիկարեանի ուշադրութիւնը։ Արդէն զի հագեւանական կապը պահուի յիշեալ փաստերի մէջ և խօսակցութեան թելի բոլոր նրբութիւնները հանգէս դան, կասեմք այսօր, որ Հայրենանի խնդրի ժամանակ, նոյեմբերի 26-ն էր, Միջնորդ դասարանը արդէն չորս նիստ ունեցել էր և բացարձակօրէն ապացուցուել էր և բանուել էր պ. Մեղքոնեանի այն մեծ ստուգողութիւնը, որը պ. Մեղքոնեանի համար միակ խարխիւն էր արդարանալու համար։ Պ. Մեղքոնեան ամբողջ ժամանակ ուժառայաւ էր լինում ապացուցանել, որ նախ աշակերտները իրան անուանել են «օղբաշ» և ապա ինքը՝ նոր նրանց անուանել է «սրիկայ» և ին. սակայն, թէ՛ պ. Մեղքոնեանի դէմ բողոքողները և թէ՛ երկրպագողներն ու պաշտօնները բոլորն էլ եկան այլ բան ապացուցեցին։ Մի քանի հատուած բերենք այդ մասին նրա անձնադոճ աշակերտների գրաւոր դիմումներէ, ուղղած ի միջնորդ դասարանին. «2) Ընկեր Արտաշէսից մեր լսած այն խօսքերը, թէ՛ գուր եկել էր այստեղ օրիկայութիւն անելու, պարզ կերպով ապացուցանում են, որ նա ինչ որ ասել է, վերաբերում է մի քանի անհատներին. 3) Երբ վիրաւորուած աշակերտներից մէկը հարց է տալիս ընկեր Արտաշէսին, թէ պ. Արտաշէս, Դմէք էք թրում աշակերտների վրայ, նա պատասխանում է, այո, ես թրում եմ ձեզ պէս աշակերտների վրայ»։

5) Երբ ընկեր Արտաշէսը ասում է «Այ՛, թրում եմ ձեզ պէս աշակերտների վրայ» վիրաւորումներից մէկը պատասխանում է. մերք էլ թրում ենք ձեզ պէս ցեց ուսուցիչների վրայ»։

— Անշուշտ այս բոլորը յայտնի էր պ. նախագահին և նրա համախոհներին. բայց որպէս զի աղաւտն պ. Մեղքոնեանի աղիկ անձը այս անպատուաբեր դրութիւնից, սրա նրա ետեւին են կարում, աշխատում են բողոքող աշակերտները պարագլուխներին խաղաղարարներ գործ բերել, անմիջապէս պատժել տալ և այլն և այլն։

Մէկ խօսքով, բոլորը հրահանգուած գալիս են ժողով

103
102
101

և մատներն ոյժով խաղ են քաշում նախկին բոլոր դեմո-
կրատական սկզբունքների վրայ և վճռում են 11 ձայնով, որ
Հայրենասիր խնդիրը յատկապէս մանկավարժական ժողովում
պէտք է քննուի և վճռուի: Մենք մի քանի ուսուցիչներու
պաշտպանելով մեր առաջին կարծիքը, պարզեցինք և պնդե-
ցինք այսպէս. «Աշակերտները պ. տեսչի յանդիմանութեամբ
որոշ չափով իրանց պատիժը ստացել են, պատիժ պէտք
է լինի ... բայց քանի որ I դասի դէպքը և նրա հետ
կապուած մի քանի աշակերտներն հարցը դրուել է ծնո-
ղական ժողովում, նոյնպէս այս խնդիրը, որ համեմատա-
բար աւելի փոքր է, քան առաջինը, որ պաշտօնական
դասի ժամանակն էր և ոչ դուրսը, պէտք է դրուի ծնո-
ղական ժողովում, ուր նախկին որոշումներն համաձայն
արծարծուելու են հարցեր կարգապահութեան և պատիժ-
ների վերաբերեալ և մասնաւորապէս արձակման հարցը:
Նաև այս խնդիրը, որպէս կարգապահական խնդիր պէտք
է վերադրել ծնողական ժողովին իրաւասութեան, եթէ
մեր նախկին որոշումները իրօք համարուում են որոշում-
ներ և եթէ մենք ուղղում ենք լինել հետեւողական: Բացի
դրանցից I-դ. պատահած դէպքը աւելի վնասակար է ու-
սումնական գործի համար, եթէ յարմար առիթ չներկա-
յանար և աշակերտները չվերադառնային դասարան. մի
դասարան խանդարելու էր ամբողջ դպրոցի կարգն ու
դաստաւութիւնը: Ինչո՞ւ մի այս տեսակ լուրջ դպրոցա-
կան խնդիր որոշուում է քննել ծնողական—մանկավ. ժո-
ղովում, այն ինչ մի տուր ու դմիտցի հարց, որ փոքր չա-
փերով սովորական բան է, պէտք է քննել մանկավ. ժո-
ղովում: Կամ պէտք է ջնջել նախկին որոշումները և եր-
կու խնդիրն էլ դնել մանկավ. ժող. կամ պէտք է և այս
խնդիրը վերապահել ծնողական մանկավ. ժողովին իրաւա-
սութեան»: Մեր խօսքը հրապարակւորէն ասելուց յետոյ
սպասում էինք, որ մեր հակառակորդ կարծուած բանա-
կը կը զգաստանար և հակառակ դէպքում իւր անելիքնե-
րն մասին բացորոշ կասէր, եթէ երբ և իցէ կուեննար նոյն
տեսակ ղեկավարեալ պաշտպանելիք խնդիրներ: Սակայն
մենք բոլորովին սխալուած ենք լինում: Մինչև այդ օրը,
որ այսպէս թէ այնպէս ժողովներ շուտ շուտ էին լինում

և մենք լաւ թէ վատ ծանօթանում էինք, թէ ինչպիսի մարդ-
կանց հետ գործ ունենք և ինչ նիւթեր են զբաղեցնում
նրանց միջոցը: Այդ օրուանից սկսած այնուհետեւ ամբողջ դա-
սերն ընթացքում—երեկուայ 11 ձայն տուող գրեթէ բոլոր
պարոնները տեսչանոցն իրենց բնակարանն են դարձնում և
ինչ որ արտասովոր ընթացք են բռնում դէպի մեզ. այն
տեսչանոցը, որտեղ—մինչև այդ օրը տեսուչն անգամ չէր
մտնում, այդ տեղ սկսում են մտնել, դուրս գալ զանազան
անձանօթ դէմքեր էլ: Երբ որ էլ աշակերտութիւնը հիաս-
թափուած Միջ. դասի-ից հոգաբարձութեան գրաւոր
պատճառաբանութիւն տալուց յետոյ դատագուր է յայտա-
բարում, դեկ. 1-ին այս միջոցին անմիջապէս դպրոց է գալիս
Ապառաժի Կենդ. կոմիտէի Դեղագատ Խ... մի սպանական
գրութիւն իւր ձեռքին հետեւեալ նշանաբանով, թէ՛ բռնոց-
քին բռնոցով կը պատասխանենք և ինչ: Մեզ դուրս արձակել
պահանջող 60 բողոքող աշակերտներից 10-ը Ապառաժի
սարսափաբեր քրիստոնէից յետոյ հետեւեալ օրը և եթ,
առանձին առանձին տարւում են ուսուցչանոց և բողո-
քագրի տակից իրանց անունները ջնջում և իրանց
յայտարարում են չեղօք, որ երկու օր յետոյ էլ երևում
են հակառակ բանակում: Հրճում է պ. Չիլինկարեան:
Բ-րդ դասարանը, որ աշակերտական օրէնքներն հիման վը-
րայ յարմարում էր փոքրերի դասատան և հէնց այդ տե-
սակէտից էլ նրան թոյլ չէ՛ տրուում այդ խնդրի վերաբեր-
եալ ժողովներին սկզբից և եթ մասնակցել, այժմ դրան-
ցից էլ հակադասադուլական բանակ է կազմուում և անա-
չառ (1) պ. 2. առանձին ուրախութեամբ է լսում նրանց
և ոտնակոխ անելով մանկավարժական ամենատարրական
ճշմարտութիւնները, դպրոցը ձգում է այնպիսի մի անե-
լանելի գրութեան մէջ, որ աշակերտների մի մասը ու-
սուցչին դատարանից քաշում է դուրս, իսկ միւս մասը—
ներք: Սրան պէտք է աւելացնել և այն, որ խեղկատակ
տեսուչը պահանջում է «մի աշակերտի համար անգամ
դասարան դնալ: Քաջային այս անել գրութեան վերջ
դնելու համար էլի մենք ստիպուած ենք լինում բողոքել
այդ հակամանկավարժական քննչի դէմ և միեւնոյն ժամա-
նակ ստիպուած ենք լինում պահանջել ժողով: Վերջա-

պէս ղեկատ. 5-ին, 1906 թ. քարեհաճում է ժ. Ժողով հրաւերել: Պ. Նախագահը յայտնում է ի վերաբերման մանկւթ. Ժողովի, որ «միջնադէպից ծագած ընդհարման գործը, որ սկզբում կրում էր մասնաւոր բնակորութիւն, այժմ ստացել է զարգացման գոյն: ... Ուստի անհրաժեշտ է որոշել ինչ միջոցներ պէտք է ձեռնարկել զարգացման խախտուած դրութիւնը վերականգնելու»: Ապա ղեկուցում է, որ «հոգաբարձութիւնը լաւ գիտէ, որ այսպիսի պայմաններում դժուար է ստանալ: յայտնում է նաև, որ հոգաբարձութիւնը առաջարկել է աշակերտութեան յանձնել դատը իրան կամ դատարանին: Այս բոլորից յետոյ կրկին շեշտում է, որ աշակերտութեան մի մասը կը բողոքէ. եթէ պահանջին բաւարարութիւն տրուի առանց քննութեան:

Այս բոլորի հետեանքը կարող է լինել այն. որ զարգացող կրփակութիւն (մարդը էս դիւտից խոստովանում է իւր մեղքը) ... դէպքը պատահել է, սակայն էական կէտը պարզուած է, քննութիւնը պէտք է պարզէ միջնադէպի էական կէտը»: Այս ասում է ղեւ Ժողովի սկզբում, իսկ հարցի քուէարկութեան Ժամանակ էլ այն կարծիքին է «Թէն պատարանը ապարդիւն է. աւելի մերկացումների տեղիք է տալու եւ անհետեւանք է լինելու. սակայն (համա թէ իւր տեղն է սաւկայնը) օրինական միջոցը դա է ...»: Աշակերտութիւնից մեանդամ արդէն մերժուած ուսուցիչ պ. Խ. Վարդապետեան իւր անգուսպ կատաղութեանը յագուրդ տալու համար աւելացնում է. «Երապէս զգալով իւր կաշուի վրայ դարձի վնասակար հետեանքը եւ ունենալով այս խնդրի վերաբերեալ ուրոյն ուսուցչական շահ. մանկավ. Ժող. պէտք է զբաղուի նրանով»: Այս առթիւ պ. Յ. Յովհաննիսեան Մ. Տէր Մկրտչեան, Յ. Պետրոսեան եւ Հ. Խաչատրեան յայտնում են հետեւեալ միտքը. Անհրաժեշտ է Ժողովի քննութեան ենթարկել գլխաւորապէս երկու հարց. 1) Հնարաւոր է արդեօք այս պայմաններում, երբ աշակերտութեան ճշդ մեծամասնութիւնը դործադու է յայտարարել, իսկ փոքրամասնութիւնը ուղում է պարապել, շարունակել պարապմունքները, թէ ոչ: 2) Անկախ գործադուի պատճառների քննութիւնից կարելի է արդեօք սրել վերաբերմունք ցոյց տալ դէպի դատադու, թէ ոչ: Ինչ կը վերաբերի առաջին հար-

ցին, անհրաժեշտ է ընդունել, որ վերոյիշեալ պայմաններում պարապել անհնարին է: Գալով երկրորդ հարցին— ոչ մի ուսուցիչ չի կարող ասել վատ է, թէ լաւ դործադու, առանց իմանալու, թէ ինչն է նրա շարժառիթը եւ այն պատճառները. որոնց շնորհիւ նա առաջացել է: Գործի սկզբում նաև աշակերտները ցանկութիւն ունէին դիմելու այդ միջոցին, սակայն յետոյ դործը յանձնեցին Մ. Գ. ի, որ քայքայուեց: Որովհետեւ հարց է ծագում, թէ աշակերտները առանց պատճառների կամայականութեամբ արդեօք կաւրող են պահանջ դնել, թէ ոչ, ուստի անհրաժեշտ է, որ մանկավարժական Ժողովը պահանջէ բողոքաւոր աշակերտներից զրաւոր պատճառարանութիւն. Թէ ինչո՞ւ համար նորա օրինական միջոցները թողած դիմել են դատադուին: Դրանից յետոյ միայն կարելի կը լինի զրական կամ բացատրական վերաբերմունք ցոյց տալ դէպի դործադու եւ ցոյց տալ միջոցներ, որոնցով պէտք է վերանայ դործադու եւ վերականգնի զարգացման խախտուած կարգը»:

Պ. Նախագահը ոչ միայն խոսնափում է յիշեալ գրաւոր պատճառարանութիւնները պահանջելուց, ոչ միայն հակառակ իւր օրամարանած առարկութեան վճիռ է կայացնում, այլ եւ դիտաւորեալ անհեթեթութիւններով Ժողովին կամենում է մոլորեցնել: Բողոքովին այլ բան ենք կարգում աշակերտների Հոգաբարձութեան ցոյց տուած գրաւոր փաստաթղթերի մէջ, այլ բան է ասում Ժողովին պ. Չելինկ.: Ստորեւ մէջ ենք բերում այդ երկու հակադիր դոկումենտները.

1) Ըստ պ. Չելինկարեանի «Հոգաբարձութեան աշակերտները տուել են պատճառարանութիւն երկու կէտից բաղկացած՝ ա) որ պ. Մելրոնեան նրանց հայոցի է, բ) որ Մ. Գ. ը քայքայել է, սակայն դա դործադուի պատճառարանութիւնը է»:

2) Աշակերտների Հոգաբարձութեան ուղղած խփական գրութիւնը ուրիշ բան է ասում մեզ. «... սակայն Մ. Գ. երէկուայ նիստում տեղի ունեցած միջնադէպը եկաւ մեկ համոզելու. որ այլ եւս Մ. Գ. անկարող է շարունակել դատաւարութիւնը.

I. «Նախ որ պ. Արտաշէս իրեն՝ աշակերտութեան շահերին

պաշտպան ցոյց տալու համար վկայ էր բերել մանկավարժական ժողովների արձանագորութիւնները եւ այդ պատճառով շեղել է Մջ- դատարանին դատավարութեան բուն խնդրից։

II. «Իւր դատաւորներին ուղղած անտեղի սպառնալիքներով առիթ տուցց Միջ- Դատու-ի կազմավորութիւն» 57 ստորագրութիւն 29 նոյեմբերի. Շուշի։ Մի այսպիսի լուրջ, գործի լուծման համար ծանրակշիռ նշանակութիւն ունեցող փաստաթուղթը հրապարակ դուրս չբերելով— ոլորտպտոյտ ճանապարհներով պ. Չիլ-իւր լուսկեացիներէ հետ միասին այս անգամ էլ կամենում են ուրիշ տեսակ հաւարի հասնել ազիզ Մեղրոնեանին, բայց երբ խորհա- խուած մտքերը ջախջախում են ժողովում, կորագլուխ հեռանում են ժողովից և մտածում են մեզ վերաւորելու համար նորանոր անաղնիւ միջոցներ։ Եւ ահա առիթ հե- տեւալ օրը հոգաբարձութիւնը պաշտօնական գրութեամբ պահանջում է ընկերվարական (!) Տեսուչ պ. Չիլ-ից ժը- ժողովի լոկ երեք չոր ու ցամաք բանաձեւը եւ նրանց ծայն տուող ուսուցիչների անունները մի առ մի. Ապա սրան հետեւում է այն, որ մեր ֆրակցիայի 6 ձայնով անցած բանաձեւը հո- գաբարձութեան կողմից յատկապէս անուշադրութեան է մատ- նում, իսկ մեւու կողմից հրամայւում է աշակերտութեան տուածարկել միմիայն 5 և տեսչական 7 ձայնով անցած բանաձեւը, այն բանաձեւը, որի զօրեղ տրամաբանութիւնը այն էր, որ «Թէեւ դատարանը ապարդիւն է, աւելի մերկացումնե- րի տեղիք է տալու եւ անհետեւանք է մնալու, սակայն օրինական միջոցը դա է»։ Ի հարկէ հոգաբարձութեան այս տեսակ ժանդարմական քաղաքականութիւնը և վերաւորական վերաբերմունքը դէպի մի քանի ուսուցիչներս ոչ այլ ինչ էր, քան եթէ անդուգական (!) տեսուչ Չիլինկարեանի «Դանօսները» և Ապառափի (այսինքն Մ-ի և Բ-ի) գաղտնի հրահանգները արդիւնը։ Խօսենք փաստերով։ Դեռ ոչինչ չեղած, Ապառափի լիդեր բժիշկ Տէր-Դաւթեան, Միջնորդ գատարանի ցրուելուց յետոյ անմիջապէս՝ դեկտ. 1-ին, այդ ժամանակ Տիխոնով գտնուող Ղարաբաղի առաջնորդ Աշոտ եպս. -ին գրում է հետեւալ բամբասալի-պառաւա- կան նամակը. «Սրբազան Հայր, Անցեալ օրուայ Միջն- Դատ.-ի խլրտումից յետոյ աշակերտութիւնը դեմօկրատի-

րի զրդմամբ գործադու է ուզում անել դպրոցում և հրա- տարակել է մի անպատկառ թուուցիկ, որին ոչ մի ուշա- գրութիւն չպէտք դարձնէր ոչ Դուք, ոչ էլ հասարակու- թիւնը . . . : Եթէ այստեղից Ձեզ ուղարկեն որեւէ բողոքադիր, Դուք, յոյս ունինք, ուղարկելու էք հոգաբարձութեանը. Այժմ մենք ուզում ենք կուսակցական դատ նշանակել եւ դրա- նով լուծել այդ խնդիրը. (Իսկապէս լաւ մանեօլը է Աշոտին խաբէլու) Յարգանքը՝ Ձեր բժ. Տէր Դաւթեան. 1 դեկտ. Շուշի։

Ապառափընտիր հոգաբարձութիւնն էլ ամբողջովին գտնուելով Ապառափի ահաբեկումների ազդեցութեան տակ՝ այն տրամադրութեամբ էր գործում, ինչ որ թելա- գրում էին նրան Ապառափի գաղտնի հրահանգները։ Այդ- էր ի հարկ է բժշկի փորը ցաւը, որ ասում է. «Եթէ այս- տեղից Ձեզ ուղարկեն որեւէ բողոքադիր, Դուք, յոյս ու- նինք, ուղարկելու էք հոգաբարձութեանը»։ Չարմանալի չէ՞ բոլորովին, որ պատահական աղա հոգաբարձուները կոյր գործէր են դառնում զանազան Ապառափներէ, տա- րօրինակն այն է, որ Չիլինկարեանի և Բ. նման մարդիկ, դպրոցական ամբողջ գործը անձնական օտար վրիժառութեան նիւթ դարձնելուց յետոյ, չեն ամաչում և դեռ իրենց մանկա- վարժ—գատարակ են համարում։

Թէ որքան ճշմարիտ և անձնազոհ մանկավարժներ են եղել մեր հաւառակորդները, թէ ինչ է կազմել դոցա գործունէութեան ուղի ու ծուծը, թէ՛ որքան արդարու- թեան ու աղնութեան հողի վրայ են կանգնած եղել յի- շեալ պարոնները և նրանց պաշտպանած հանրաժանօթ պ. Ա. Մելքոնեան, այս բոլորը մեզ ամենքին համար պարզ կը լինի վերջնականապէս, եթէ յիշենք երկու տիպիկ օրի- նակ դոցա ամենաքնքշող սիրագործութիւններից։ 1905—1907 ուս. տարուայ վերջում, մայիսի 30-ին ժայռի № 3, 4 Ա. Մելքոնեանի ձեռքով—լոյս են տեսնում XҮIII և XX-րդ ժո- դովներէ երեք բանաձեւերը։ պ. Ա. Մելքոնեան և Բ. այս- պէս ուշ հանդէս գալով շինծու, կեղծած և խարդախած բանաձեւերով ի հարկէ նպատակ ունէին իրանց արատաւո- րուած պատիւը կեղծիքներով վերականգնել, բայց այդ չէ յաջողուել և չի յաջողուել, քանի դեռ կանգուն են այդ

նիւթերի վերաբերեալ գրաւոր դժուամենասերք: Ձուգընթացաբար կրերենք իսկական բանաձևերը և ժայռում տպագրուածները:

Խորհրդած խօսքերը և պարբերութիւնները ընդգրծում ենք, իսկ շինծուները փակագծի մէջ տուեալ:

XVIII ժողովի երեք խկական Ա. Մեյքոնեանի ժայռում բանաձևեր. բաւար.

(Ուսուցչական խումբը ուղղում է հոգաբարձութիւն հետեւեալ գրութիւնը.

XVIII ժողովն զբաղուեց նոյնպէս և այս հարցով. «Ընչ միջոցներ պէտք է ձեռնարկել, որպէս զի հարաւոր լինի դպրոցի լաւտուած կեանքը վերականգնել. Ընչ գիւրք են բռնելու ուսուցիչներն այս գէպի նկատմամբ: Այս հարցերի առթիւ երկար ու բարակ խորհրդածութիւնից յետոյ առաջարկուեցան երեք բանաձև».

II. «Անհրաժեշտ է, որ մանկ. ժողովը պահանջէ աշակերտութիւնից, ինչո՞ւ է նա զիմէ գործադուլին, զբանից յետոյ միայն հնարուոր կը լինի ցոյց տալ, թէ Ընչ միջոցներ պէտք է ձեռնարկել դպրոցական կարգը վերականգնելու համար: Այս բանաձևն ստացաւ 6 ձայն. V. Տէր Մկրտչեան. Յ. Յովհաննիսեան. Յ. Տէր Յակոբեան, Արսէն Բէջանեան. Յ. Պետրոսեան և Հ. Խաչատրեան:

II. Բանաձևին ձայն տուողները՝ Մատթէոս Տէր Մկրտչեան, Հայկ Խաչատրեան, Յակոբ Յովհաննիսեան և երեք ուրիշներ այն կործին են, որ ուսուցչական խումբը չպէտք է հետաքրքրուի այդ խնդրով. մինչեւ որ դատեց խոյս տուող աշակերտները չդիմեն ուսուցչական խմբին եւ չտան իրանց պատճառ տրամաբանները, թէ ինչո՞ւ են խոյս տալիս դատից.

«Եւ այս առթիւ ժողովն նախագահը և ուրիշները մի քանի անգամ շեշտեցին և յիշեցրին, որ բողոքողների գրաւոր պատճառաբանութիւնները իրենց պաշտօնական գրութեան հետ արդէն ներկայացրած է դպրոցի հոգաբարձութեանը, բաղմաթիւ անգամ մենք խմբովին նրանցից լսել ենք և վերջապէս գործի էութիւնը գոնէ մեզ համար շատ պարզ է* և շատ կրկնուած է: Չնայելով սրան, բայց և այնպէս II բանաձևի կողմնակիցներն իրենց ասածի վրայ մնացին):

III. «Անհրաժեշտ է համաշխարհային տեսութեան, որ նախապէս չունի ինքնադատաստան անելու և պէտք է գործը յանձնի դատարանի քննութեան, իսկ գործադուլը մինչև քննութեան վերջանալը կարող է շարունակել: Այս բանաձևը ստացաւ 7 ձայն. պ. պ. Նախագահ. Տէրաբեան, Ռ. Մանասեան, Վարդապետեան, Արեան, Բէջանեան, օր. Յարութիւնեան:

III. Շահադրդուած աշակերտները դպրոցական, բարոյական եւ իրաւական անտախտից, ո՞չ մի իրաւունք չունին իրենց ձեռնարկ դատաստան կրորդ. այդպիսի պահանջներ, վրձիններ քննելու եւ դպրոցի կեանքը խանդարելու. նրանք պարտաւոր են այդ գործը դատարանի առաջ դնել. որ նա քննէ եւ ամենակարգ ժամանակում որոշէ մինչև այդ. եթէ չեն ուղի դատեր շարունակել, կարող են իրենց գործադուլը շարունակել, միայն միւս դատարաններին խանդարելու իրաւունք չպէտք է ունենան».

* Սարքին այսպէս կրկին, մարդը ԹԸ. ժողովում հրապարակով ասում է «սակայն էական կէտը պարզուած չէ». իսկ սարքած դանտի մէջ ասում է «գործի էութիւնը գոնէ մեզ համար շատ պարզ է և շատ կրկնուած է»:

(Դեկտեմբերի 22-ին հոգաբարձութիւնը ստանում է հետեւեալ գրութիւնը ուսուցչական խմբից.

«Սրանով պատիւ ունենք մեծ. հոգաբարձութեանը յայտնել, որ ամսոյս 19-ին, XX. մանկավարժ. ժողովը պ. Մեքենեանի և աշակերտների մի մասի մէջ տեղի ունեցած մի միջոցառման մասին ծագած հարցի շարունակութիւնն էր. — այսինքն: Ի՞նչ դերք պէտք է ընէ մանկավարժ. ժողովը այս գործի նկատմամբ Առաջարկեցին երեք բանաձե):

XX-րդ ժողովի բանաձեւերը
բւս Ա. Մեքենեանի.

I. «Որպէսզի արգարութիւնը պարզուի, անհրաժեշտ է մանրամասն քննութիւն: Միայն այս միջոցով հնարաւոր է չարիքի արմատները դանել. Գործի մէջ մասնակցողների կատարած դերը ըմանալ և ըստ այնմ մանկավարժական ժողովն իւր զիրքը որոշէ: Մանրամասն քննութիւններով միայն հնարաւոր է զարգը իւր բնական զրուծեան մէջ զնել. այլապէս աշակերտների մէջ կարող է ամրանալ այն կառ համոզումն, թէ իրենք են միակ ուժն և իրենց ցանկութեամբ պէտք է

ամեն ինչ լինի: Այսպիսի դէպքերում ուսուցիչը չի կարող իր կրթական և դաստիարակական դիրքի մէջ մտնել. նա կը դառնայ խաղալիք աշակերտների քմահաճոյքներին: Իսկ այդ ամէնը դարձեալ կան դործի անկումն է. Սրա հակառակ, անաչառ քննութեան դէպքում աշակերտները վերջիվերջոյ կը համոզուին, որ քմահաճոյքով. բռնութիւնով չի կարելի զարգացան էական օրէնքները խախտել, այդ ամէնի համար հարկաւոր է արդարացի քննութիւն: Այս բանաձեւը ստանում է 16 ժայն ընդդէմ 6-ի»:

Ահա ձեզ ուշադրաւ դոկումենտներ, որոնք այնքան մեծ ճշմարտութիւններ են բովանդակում իրենց մէջ, որ եթէ հատորներ էլ գրելու լինէնք, կրկին հանգչելու ենք էլի այդ դոկումենտների վրայ: Մենք ամբողջ տարին, ամբողջ մանկավարժ. ժողովների ընթացքում ջանում էինք սպառնացանել, որ Զիւլնիարեան և Բ. անմաքուր, անբարեխիղճ, մեքենայութիւններով պարապող, պրօօկատորական ոգի տարածող, կեղծիքներով ու խաբեբայութիւններով պարապող մանկավարժներն են, մեզ մեծ դժուարութեամբ է յաջողում այդ ամէնը շօրափելի փաստերով ցոյց տալ, այս դոկումենտները մեզ այդ դժուարութիւններէն ընդ միշտ հանում են: Այս բոլորից յետոյ էլ մտաւորն այն է, որ ասում են «Այս բանաձեւը ստանում է 16 ժայն ընդդէմ 6-ի»: Այս թուանշանները ճիշտ կը լինէնք, եթէ Ապառաժի ամբողջ կազմն էլ հաշուենք ուսուցչական խմբի անդամներ. դուրսէ այդպէս էլ հաշուած է, բայց թէ փաստը մնում է փաստ, որ Ղարաբաղի Հայոց թեմական դպրանոցի ուսուցչական խումբը XX-ժողովի ժամանակ, դեկտ. 19-ին 19 ուսուցչից էր բաղկացած, իսկ եթէ ի նկատի առնենք այն հանգամանքն էլ,

որ XX-րդ նիստին, դպրոցի ծառայի անձնատապալանութեան պատճառով բացակայ էր ժողովից և Յ. Յովհաննիսեան (ինչպէս որ Ա. Մ. Խոստովանում է իւր այն յօդուածի մէջ ժայռ № 4), ինչպեւանէ XX-րդ նիստին ներկայ էին 18 ուսուցիչ, որից պարզ է, որ երբէք չէր կարող 16 ձայն ընդդէմ 6-ի լինել: Դա նկուղային ֆանտազիա է և միայն մի բան է ցոյց տալիս, «Որ ստի մանգղիլը (անցած տարածութիւնը) շատ կարճ է»:

Այդպիսի անբարոյականացնող զէնքով ղենուած մանկավարժները, բնական է, որ միշտ լոյս տեսնելիս պէտք է փախչեն, որպէս զի իրանց ճիւղային գործերը երեւան չգային: Սրանով էլ պէտք է բացատրել այն, որ երբ 47 բողոքաւոր աշակերտները ստիպուած թողնում են դպրոցը, որով և դպրոցի չորս դասարանը—Գ-Ձ. փակուում են, պ. Չիլինկարեան և Բ. Ղիւային ժպտով են նայում հեռացողներին և նեղութիւն անգամ քաշել չեն ցանկանում Մանկավարժական ժողովի քննութեան նիւթ դարձնել այդ անմխիթար երեսիցը: Դարձեալ մենք բողոքաւոր ուսուցիչներըս ենք լինում, որ դրաւոր թղթով ստիպում ենք տեսչին ժողով հրաւիրել: Գումարում է տեկտ. 15-ին XIX ժողովը և պ. Նախագահը չի ամաչում, յայտնում է «Որ ժողովը հրաւիրուել է ոչ իրա ձեռնբերեցութեամբ, այլ մի քանի ուսուցիչներին առաջարկութեամբ»: Բայց որպէս զի ժողովը մէ մի դրական հետեանքի չյանգի և գործը կրկին մ'նայ խաւարի մէջ, պ. Նախագահը բարեհաճել էր ժողովի բերել պ. Ա. Մեղրոնեանին, որը այդ խնդիրներին վերաբերեալ ոչ մի ժողովի ներկայ չէր եղել մինչև այդ օրը և բացի դրանից, ինչպէս ցոյց են տալիս մեզ յետագայ փաստերը, այդ ժողովից մի 9—10 ժամ առաջ, առաւօտեան ժամը 10-ին տուած էր եղել իւր հրաժարականը, որի առթիւ էլ հէնց նոյն երեկոյեան Առաջնորդաւորանում եղել էր Հոգաբարձական ժողով, իսկ այժմ էլ եկել էր հեռացողների համար զիւրը արշելու: Արովհետեւ պարզ էր, թէ ինչ գիտաւորութեամբ էին եկել ժողովի, ուստի բացի Մեղրոնեանի անտեղի վերաւորանքները լսելուց առանց մի դրական եղբակացութեան դալու, առանց կարողանալու որևէ գիւրը որոշելու 3—4 ժամից յետոյ փակուում է

ժողովը: Այդ ժողովից յետոյ, հետեւեալ առաւօտեան դպրոց է գալիս Հոգաբարձութեան լիա նախագահը և յայտարարում է աշակերտութեան. Մեղրոնեանը հրաժարական է տուել և հոգաբարձութիւնը ընդունել է: Այս յայտարարութիւնից յետոյ ամենքն էլ համոզուած էին, որ դրանով էլ փակուեց հարցը. բայց թէ ինչպէս ապագայ փաստերն են պարզում, դա մի կեղտոտ պոլիտիկա է եղել: Ահա թէ ինչու: Մինչև հրաժարականի լոյս աշխարհ գալը կռիւը բարձր դասարանի բողոքող աշակերտների և պ. Ա. Մեղրոնեանի մէջն էր, սակայն որովհետեւ Ա. Մեղրոնեանի արատաւորած անձնաւորութիւնը ժողովրդեան հակակրօնութիւնը փառապաշտուց դառնալուց, ուրիշ լաւ արամադրութիւն չէ շահում, ուստի Չիլինկարեան—Մուշակեան—Ապառաժեան միացեալ ընկերութիւնը նպատակայամար է գտնում կռուել այլ ֆրոնտով և այդ ֆրոնտ կազմող ոյժերն էլ ներկայացնում են բարձր դասարանների 23 աշակերտները, Բ.-րդ դասարանի անմեղ պատանիները: Միացեալ ընկերութիւնը—ինչպէս ժողովրդական առաժն է տաւ, դառնում է տիկ, իսկ ոչ բողոքաւոր աշակերտներին, անմեղ պատանիներին և միւս կողմից էլ Հոգաբարձութեանը դարձնում է բերան: Այս է պատճառը, որ սկզբունքով միանգամայն հակադասադասական աշակերտները—Մեղրոնեանի հրաժարականից յետոյ հանգէս են գալիս դատադուլի ամենաջերմ կողմնակիցներ և յայտարարում են դատադուլ: Պ. Չիլինկարեանի փութկոտութիւնը էլի առաջ է գալիս. անմիջապէս հրաւիրում է XX-րդ ժողովը: Պ. Նախագահը զեկուցում է ժողովին «պ. Մեղրոնեան հրաժարուել է և հոգաբ. ընդունել է նրա հրաժարականը... Անհրաժեշտ է քննել գործը. քանի որ ինքը պ. Մեղրոնեանը հրաժարուելով հանդերձ ցանկութիւն է յայտնել. որ քննութիւն լինի եւ ճշմարտութիւնը երեւան գայ...: Աշակերտութեան միւս մասը որ թրծագուլ է յայտարարել և պահանջում է գործը անպայման ենթարկուել քննութեան, հակառակ դէպքում սպառնում է հեռանալ դպրոցից: ...: Մանկավարժական ժողովը պէտք է այժմ իւր դիրքը որոշէ աշակերտութեան միւս մասի դորձագուլի եւ պահանջարկի վերաբերեալ: Պ. Յ. Տէր Յակովբեան նկատում է. «Որովհետեւ աշակերտ-

ները չեն ընդունում քննութիւն, քննութիւնը պէտք է լինի վերջից եւ պէտք է ծանրանայ էական կէտի վրայ, այն է ուսական հայոյանքի վրայ: Այդպիսի քննութիւն աշակերտները ընդունում են, և եթէ հոգաբարձութիւնը ընդունի տշակերտների պայմանը, որով նրանք առաջարկում են քննութիւն միմիայն ուստական հայհայանքի վերաբերեալ, դա կը լինի ուղիղ ճանապարհը հարցը վճռելու համար: «Պ. Ս. Գեան-ջեցեան նկատեց, որ Հոգաբարձութիւնը այս դէպքի վերաբերեալ կայացրած ժողովները պէտք է անէր խառն—մանկավարժական ժողովի հետ, այժմ մանկավ. ժողովը շատ բան անել չի կարող: Միայն կարելի է առաջարկել, որ պ. Մեկրոնեանի հրաժարականը համարուի ժամանակաւոր, մինչև որ գործը քննուի...: Հայրենիքի սիրոյ անուրջներով մտամաշ Ֆանատիկ պ. վարդապետեան առարկում է... «գրութիւնը աւելի է բարդացել, ուստի մանկավարժական ժողովը պէտք է պահանջի հոգաբարձութիւնից, որ հրաժարականի հարցը մի կողմ դրուի, մինչև որ գործը քննուի և անմեղ մարդիկ զուր տեղը չտուգեն: Ժողովը հարց պէտք է դնի, որ նրա անդամներեց մէկը ի՞նչ հիման վրայ առանց առիթի հրաժարական է տալիս և նրա հրաժարականը ընդունուած է: Բացի դրանից պէտք է նկատել, որ աշակերտութիւնը աշակերտութիւն չի անում. պէտք է կտրուի միջոցներ ձեռնարկել. (բաւ առաջ ո՞րտեղ էիր), ստեղծուել է քառային դրութիւն, այն է դրսի ազդեցութեան տակ. (ճիշտ է, մտաբերեցէք Ապառաժի հրամանները). քննութիւնը անհրաժեշտ է, որպէսզի չարեքի արմատը գտնել եւ դուրս կորզել. ինչ գնով էլ լինի»:

«Պ. Մ. Տէր. Մկրտչեան և Հ. Խաչատրեան յայտնեցին հետեւեալ միտքը. այժմ սեղանի վրայ է դրուած այն հարցը, թէ ինչ դերը պէտք է որոշի մանկավարժ. ժողովը պ. Մեկրոնեանի հրաժարականի, II դասարանի և բարձր դասարանների 23 աշակերտների դասադուլի և պահանջադրի վերաբերեալ՝ ի նկատի առնելով, որ պ. Մեկրոնեան ստիպուած է եղել հրաժարուել և սպառնում են թողնել դպրոցը: Հարադատ մնալու համար նախկին նիստերում արձարձուած հայեցակէտին դերը որոշելու խնդրում անհրաժեշտ է ունենալ վերջին երեւոյթի շարժառիթի դրաւոր պատճառաբանութիւնը: Ցանուն քննութեան այժմ

գործադուլ անող աշակերտները քաջ տեղեակ են, որ պ. Մեկրոնեանի դէմ բողոքող աշակերտները քանիցս անգամ ժխտել են երկրորդ քննութիւնը և ուրեմն եթէ պ. Մեկրոնեան հրաժարուում է բաւարարութիւն տալով աշակերտների պահանջին, ինքնըստինքեան փակում է հարցը միւս կողմից քննութիւն պահանջող հոգաբարձութիւնը, եթէ ընդունում է նրա հրաժարականը, ինքնըստինքեան օրինական սանկցիա է տալիս գործի լուծման: Բացի դրանից ի՞նչ հանգամանքն է դրդել դասադուլ անել այն աշակերտներին, որոնք մի քանի օր առաջ թէ դրաւոր թուցիկներով և թէ բանաւոր կերպով պախարակում էին գործադուլ յայտարարող իրանց 47 ընկերներին, սկզբունքով հակառակ հանդիսանալով այս խնդրում գործադուլ յայտարարելուն: Հետեւաբար կարելի է ենթադրել, որ հրաժարականի մէջ կան կէտեր, որոնց հիման վրայ քննութիւն պահանջող աշակերտները իրաւունք են համարում իրանց սկզբունքին հակառակ գործադուլ անել: Ուստի երեք հարց է ծագում. ա) Ինչի՞ց դրդուած այս բոլորից յետոյ այդ աշակերտները զիմում են դասադուլի. ի) Ինչ հիման վրայ պ. Մեկրոնեան հրաժարական է տուել և զ) Ի՞նչ պատճառաբանութեամբ քննութիւն պահանջող հոգաբարձութիւնը ընդունել է պ. Մեկրոնեանի հրաժարականը: Այս հարցերին պատասխան կարող են տալ միմիայն Մեկրոնեանի հրաժարականը և դասադուլ անող աշակերտների գրաւոր պատճառաբանութիւնը, ուստի այդ դիւլմենտները պէտք է ունենայ մանկավ. ժողովը, որպէսզի հնարաւորութիւն ունենայ դերը որոշելու այս խնդրի վերաբերեալ: ... Քննութեան quare կողմնակից պ. Չիլինկարեան ի պատասխան յիշեալ ուսուցիչների յայտնում է... «Հրաժարականի քննելու կարեւորութիւն չկայ...: Ի՞նչ է որոշել Հոգաբարձութիւնը, մանկավարժական ժողովի համար կարեւոր չէ իմանալ անկախ հոգաբարձութիւնից ժողովը պէտք է որոշի քննել գործը եւ դուրս բերել նրան այսպիսի խնդրուած դրութիւնից»: «Պ. Լ. Գեան-ջեցեան յայտնեց հետեւեալ միտքը. երբ դրուած էր հեռացող 47 աշակերտների և պ. Մեկրոնեանի հարցը, այդ հարցում երկու կողմերը հանդիսանում էին մեղադրող-աշակերտութեան միւս մասը չէր հանդիսանում մեղա-

դրող 47 աշակերտները վերաբերեալ. այժմ պարզ չէ ինչու՞մ են մեղադրուած նորա իրանց ընկերներին, պարզ չեն չոցա մեղադրական կէտերը. եթէ իրօք նոքա հանգիստանում են մեղադրող, այն ժամանակ ժողովը դորձ է ունենալու մի նոր խնդրի հետ: Նախկին ժողովի ըուն նպատակն էր դերը որոշել հեռացող 47 աշակերտները վերաբերեալ. ... պ. Մեղրոնեան հրաժարուեց և դպրոցը զրկանքից ազատուեց: ... Աշակերտութեան միւս մասի պահանջը պէտք է քննութեան ենթարկուի և որոշուի, որքան արդարացի է կամ անարդարացի նոցա դասադուլը. նոցա դասադուլը չի յառաջացել վիրաւորների կամ հայհոյների շնորհիւ, այլ մի ուրիշ հանգամանքի շնորհիւ. անհրաժեշտ է բնորոշել այդ պահանջի և դասադուլի իրաւասութիւնը»:

Արժարժուած տեսակէտներն ամփոփելով—առաջարկուած են երեք բանաձև: Առաջին տեսչական խոշորէ բանաձևը ստանում է 13 ձայն (ըստ Մեղրոնեանի 16, որ արդէն վերելք յիշել ենք), II-ը. 3. Իսկ III-ը օպոզիցիայինը—միայն 5 ձայն*: Թէ ինչու մեծ ձայնը ստանում է I-ը, դրա դադարներն այն է, որ ուսուցչական խմբի ճշդ մեծամասնութիւնը օպպոզիտիւստական վարդապետութեան հետեւող էր: Հէնց մէկը պ. Տէրտէրեան, որ համարուում էր տեսչական աւագ խորհրդական—տեսնենք թէ այս պարտքը որքան ինքնուրոյն համոզմունքի տէր է, տեսնենք թէ որքան հասկացողութիւն ունի շխտակութեան և ազնուութեան մասին: Խօսենք փաստերով:

Հէնցն նոյն այս պարտքը—XX ժողովում վեհափառ Ապառաժի ամբակուռ հաղուկին՝ Ա. Մեղրոնեանին և նրա աթոռակիցներին սերաշահելու համար մէջ է բերում վերջին մոզայի հայհոյական ճոռոմաբանութիւնը. «Քննութիւն պէտք է լինի, որ պարզուի ո՞վ ինչ դեր է խաղացել այդ դորձում, որտեղից է եղել թռուցիկների ֆաբրիկացիան և ուղբեր են եղել նոցա հեղինակները, որպէս զի յայտնի լինի ի՞նչ մարդիկ են ուսուցչական խմբի անդամները և ում հետ պէտք է դորձ ունենալ»։ Թէև անմիջապէս այս առթիւ պ. Մ. Տէր Մկրտչոյան ամենաքաղաքական

ձեռով պ. Տէրտէրեանի անպարկեշտ ու անվայել վերաբերմունքը յանդիմանելուց յետոյ հրաւիրում է «փոխանակ ծռռ ու մռռ ճանապարհներով խօսելու—պաշտօնակից ընկերները, եթէ ունին մի բան ասելու, կարող են ուղղակի դնել ժողովի քննութեան», որպէս, բացի այն, որ պ. Տէրտէրեան այլևս ոչ մի խօսք չի ասում դրա դէմ, այլ և XXIII-ը ժողովի ժամանակ, երբ կարգարցում է XX-ը ժողովի արձանագրութիւնը և Յ. Յովհաննիսեան (որ XX-ը ժողովին նորից չէր եղել հրաւերը իւր ժամանակին իրեն յայտնի չլինելու պատճառով) «պ. Տէրտէրեանի արած անարդիւնքի առթիւ առաջարկում է պ. Տ.-ին բացօթն իջնալով ասել իւր մեղադրանքը, եթէ ունի ենթադրութեան դէմ մի անհնաճնչին յենակէտ» ...:

Եւ ի՞նչ. երեկուայ յոխորտացող Տէրտէրեան այսօր էլ կորագրուի ընկած պատասխանում է, «Որ ինքը ոչ մի մեղադրանք չունի ասելու եւ փաստեր էլ չունի մեղադրելու ... իսկ լրագրութեան մէջ ինքը ոչ մի յօդուած չի դրել այդ խնդրի վերաբերեալ. քանի որ իրա համար մեծն է իրողութիւնը» (վաղագի մէջ ասենք, որ ժողովի հետեւեալ օրը ժամանակում (?) էլ վենա ստորագրութեամբ պ. Տէրտէրեան մի ամենազցուելի ու նողկալի պատկզկ էր ուղղել նոյն Յ. Յովհաննիսեանին): Ահա Ձեզ համոզմունքով ու դադարաւրական կուլ մղող մանկավարժ. ըսյց աւելի ծիծաղելին կտեսնք: Պ. Տէրտէրեանի անպատուաբեր ծռռաղի մէջ լինելը նկատելով պ. Չիլինկարեան, երբ մէյդան է դալիս և առաջարկում է պ. Տէրտէրեանին «Աւելացնել իւր ասածներին հետեւեալ խօսքերը, որ նա ասել է այդ լողորդըսում խմբի հիման վրայ, Պ. Տէրեան ընդունեց պ. Նախագահի առաջարկը»: Ահա նա էլ 13 ձայն տուողներէց նշանաւորագոյնը: XX-ը ժողովի I բանաձևին ձայն տուող 13 անդամներից մի անբարեխիղճ ապուշի խաբահտերիստիկան էլ Պարեոն է յիշատակել. դա պ. Ռ. Մանասեանն է: Այս պարտք էլ նոյն XX-ը ժողովում, I բանաձևին ձայն տուող յետոյ, երբ խօսք է լինում թռուտչանների մասին, յայտնում է «Պր ինքը անկարող է II և III դասարանների աշակերտներին ձայնադուլութիւնից թռուտչան դուրս բերել, որովհետեւ վերոյիշեալ դասարանիկները չեն յաճախում դպրոցը

*) Բանաձևը մէջ բերել:

գործադուլի պատճառով, իսկ առանց տեսնելու աշակերտներին հնարաւորութիւն չունի թուանշան դնելու: Պ. Նախագահ նկատեց, որ պ. Մանասեանը կիսամեայ դատաւութեան ընթացքում պէտք է որոշ չափով ծանօթանար աշակերտներին: (Դրուստն ասած, պ. Չիլինկարեան—դրա մատ բարձրացնելն է Ձեզ հետաքրքրում, թէ դրա աշակերտները հետ ծանօթանալը) և առաջարկեց պ. Մանասեանին դուրս բերել թուանշանները, ինչպէս որ կարող է»: Պ. Մանասեան, որ մի օր առաջ խոստովանում էր, որ աշակերտներին չի ճանաչում, էյի նոյն պարոնը մի օր յետոյ Բ-րդ դասարանի 45-ից 29-ին թոյլ էր նշանակել (XX-րդ ժող.): Ահա Ձեզ բանաձևի ձայն տալուն հմուտ, զպրօցական կնճռոտ խնդիրներ վճռող մի մանկավարժ: Այս բոլորը թող համողեն ընթերցողին, թէ ի՞նչ մարդկանց մասնէրով է խեղդուել ճշմարտութեան ձայնը: Ահա թէ որտեղ պէտք է որոնել դպրոցի անկումը:

III.

Գ. Նկուղային գործունէութիւն.

Դեկտեմբերեան XX-րդ ժողովով մանկավ. խորհրդի հրապարակային քօղարկուած գործունէութիւնը փակուում է: Խմբի «մեծամասնական ֆրակցիան իրան նուիրում է «նկուղային գործունէութեան»։—Ընկերութեան պատուաւոր անդամներ և հիմնադիրներ՝ Չիլինկարեան և Տէրտէբեան, իրենց խնամքին յանձնած մնջկատակ ուսուցիչ հաւատացեալներին մշտապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահելու և ճշմարտութիւններ ըմբռնելու ճանապարհից հեռացնելու համար հրաւիրում են պաշտօնական նկուղային ժողով և որոշում են ոչ Մեկքոնեական ուսուցիչներին բօյկոտի տալ: Նկուղային մտածողութեան այս անդրանիկ գոհարի մասին, շատ ուշ, մենք ղեկավարածով առկթ ենք ունենում լսել: Անթիւ ու անհամար գաղափարաւոր գործերի մերկացումից յետոյ, իւր կարգին, ըստուցիչ պ. Գրիգորեան 22-րդ ժող. յայտնում է. «Որ ուսուցիչներին մի մասը չկարողանալով յարգել իրանց հակառակորդներին

տեսակէտները՝ թոյլ են տուել իրենց մի քայլ, որ վայել չէ մանկավարժներին: Նրանք ժողով են արել և որոշել են բօյկոտի ենթարկել իրանց հակառակորդներին, որոնք Մեկքոնեանի խնդրում արժարժեւ են իրանց տեսակէտները և պաշտպան չեն հանդիսացել նրան: Դա փաստ է և այդ փաստը իրան հաղորդել է իւր քոյր օր. Գրիգորեանը»: Խնչպէս ցոյց է տալիս ժամանակագրութիւնը—վերև յիշուած նեխուած մտքերին, դեկտ. 24-ին (1906) հետեւում է Ապառաժի կենդրոնական կոմիտէի պաշտօնական տերբորական դրութիւնը՝ Մեք. Ա.-ի ձեռքով, ուղղած աշակերտութեան դատաւոր և I Միջն. դատարանի նախագահին և նրա ընկերներին:

Այս սպառնական դրութիւնն էլ մի աւելորդ անգամ դալիս է հաստատելու, որ թեմ. դպրոցի «մեծամասնական ընկերութիւնը»—անուղղակի ճանապարհով կամենում է ճնշել հասարակական կարծիքը և սարսափահար անել բողոքող աշակերտութեանը: Երբ բոլոր գործադրած միջոցները՝ տերբօրը, բօյկոտը,—զանազան օրօրեաների զբաւրոյց դալը, Ապառաժի Приказ-ի ընթերցումը և կոնար դատաւոր յառաջ բերելը ապարդիւն և անհետեանք են մընում, այդ դէպքում զպրօցասէր ընկերութիւնների մամուկալած մտքի ճահճից ծնունդ է առնում մի վերջին հրէշային ծրագիր ևս՝ a) Դպրոցի բարձր դասարանները փակել և b) Դպրոցի ամբողջ ղեկավարութեան գործը յանձնել ոչ բողոքաւորներին: Թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ կէտերը կարճ ժամանակում իրագործուում են: Եւ ահա 1907 թ. Յունուարի 10-ին, դպրոցի դրան կպցրած հոգաբարձութեան ազդի հիման վրայ բարձր դատարանները յայտարարում են փակուած և դպրոցի մուտքն էլ միայն բողոքաւորների առաջ խօսիւ արգելուում է: Այսպիսի անժայր անարդարութիւնից զգուած բարձր դատարաններին ից մօտ 10 աշակերտ—յունուարի 12-ին իրանց վկայականները առնելով, հեռանում են դպրոցից: Մնացած բողոքող աշակերտութիւնը՝ հոգաբարձութեան դպրոցակործական գործը տեսնելուց յետոյ այլ ևս չէ՛ կարողանում համբերել և մոլեղնացած դիմում է հոգաբարձութեան հետեւեալ դրութեամբ. «Արցախի Թեմ. Դպրոցի մեծարգոյ

հոգաբարձութեան. աշակերտներէց. — Ինկատի ունենալով որ Ղուբ Զեր առաջարկած ձևին դիտմամբ յամառելով պատճառ դարձանք մեր սիրելի ընկերներէ և առաջնակարգ վիճակներ վիայութիւննց հրաժարութիւնն ու նրանց միանգամայն անմեղ տեղը դոհուելուն, այսու մենք, բարձրը դասարանի աշակերտներս — մեր արդար բողոքն ենք յայտնում ձեր անարդար ու բերօքկապակ որոշման դէմ, սպասելով, թէ ինչ դերք էք բռնելու այսուհետեւ դէպի բողոքողներս: Բարձր դասարաններէ բողոքող աշակերտներ 1907 թ. 13 Յունիս:»

Ուրեշի հրահանգներով շարժուող հոգաբարձութեան վրայ դրչի այս խօսքը անզօր է լինում ազդել. և հոգաբարձութիւնը պնդում է իւրը խօսքը. իսկ միւս կողմից էլ — ոչ բողոքաւորներին աւելի եղանակ բերելու համար — արւում է ամեն առաւելութիւն և ոչ մի դժուարութիւն: Մինչդեռ բողոքաւոր աշակերտները — հասարակութեան աչքի առաջ — անգործ փողոցները թափառում են, միւսներէ համար Ղուբուղի թաղում, V դաս. աշակերտ Այդինեանի բնակարանում բաց են անում նոր-թէմական դպրոց, ուր դասաւարտի պաշտօնով մուտք են դործում ինքը պ. Զիլինկարեան, Տէրտէրեան և Կ⁰. Նայն ժամանակներում էր, որ բողոքաւոր աշակերտ Մ. Տէր Ղաղարեանին Բ-րդ դասարանի աշակերտ Գ. Բալասթէեանի միջոցով խարում են և տանում մի խուլ անկիւն, որտեղ պարսպա դարան մտած են լինում ոչ բողոքաւոր աշակերտները, որպէսզի մի փառաւոր ջարդ ու փշուր անեն: Դաւադրութիւնը գլուխ չէ գալիս և դաւադրներէ ամբողջ խմբակը — պարագլուխներէ հետ մէկտեղ բողոքաւորներէ կողմից բռնուում են: Բողոքող աշակերտները յաւնուարի 18-ին եղելութիւնը գրաւոր կերպով հաղորդում են Տեսչին և պահանջում են բաւարարութիւն: Ճշմարտութեւ պ. նախագահը էսօր — էգուր ձգելով փետր. 4-ին, մի կերակի առաւօտ, երբ օպպօզիցիայի գրեթէ բոլոր անդամները, ոմանք հիւանդութեան պատճառով, ոմանք էլ ընտանեկան անցեւորածիւրէ դործի պատճառով հնարաւորութիւն չեն ունենում ժողովի դալ, այդ օրը պ. նախագահը իւր բնակարանում պռանց մանկավարժական ժո-

ղովի քարտուղարի, առանց 5 ուրիշ անդամների դուժաւրում է 22-րդ ժողովը, ուր որոշում է ընտրում է մի յանձնաժողով, որպէսզի Մ. Տէր Ղաղարեանի գործը քննէ: Յանձնաժողովի երեք անդամներէ մէկը լինում է ինքը պ. Զիլինկարեան: Մի անդամուայ ձեւական մի քանի հարց ու փորձից յետոյ մինչև այսօր քննուելու է դեռ այդ գործը: (Ստենք, շատ ամբօրինակ էլ կը լինէր, որ այդ որոշումը միայն կատարուէր): Շատ հետաքրքրական է և մի այլ խոնքիւր, որ այդ նոյն ժողովի խորհրդածութեան նիւթ է դառնում: Դա ուսուցիչ վերակացու պ. Ա. Գեանջեցեանի վերադարձի խնդիրն է, որ հասցել է Բ. դաս. աշակերտ վերն յիշուած Բալասթէեանը: Իրողութիւնը ժողովին զեկուցում է պ. Ա. Գեանջեցեան այնպէս. «Մեծ դատարար ջոյնին 5 հոգով իրենց սովորութեան համաձայն ուղղում էին դուրս գալ, սակայն են չէի թողնում, որովհետեւ այդ բանը նրանց նկատմամբ առաջին անգամը չէր: Ծառուրեանն առում է. «հէնց ուղղում էք ծառաների հետ կուլաներ և նոր թողնէր»: Եւ բարկացայ նրա վրայ, իսկ Տէր Պօղոսեան ասաց ինձ. «Թնչ ես ճշդում»: Եւ համբերել չկարողացայ և նրան «վերք» անուանեցի: Տէր Պօղոսեան առանց մի բան ասելու, հեռացաւ: Սակայն երբ ուսուցչանոցից ցած էի իջնում և աստիճանների վրայ էի, Բալասթէեանը, որ այդ գործի հետ ոչ մի կապ չունէր, փախերի ներկայութեամբ տոաց ինձ «վերք էլ ես, լըբի կտոր էլ, մի բան էլ»: Եւ պ. Զիլինկարեան առաջարկեց 5 հոգու ծնողներին կոնչել և յայտնելով այդ մասին, զոյշացնել նրանց. ընդունուեց վերջինը: Դուք էլ ընթերցողին 2-եանի այս տեսակ մանկավարժութիւնը խորթ թուի: Քացց ի հարկէ մենք ասել ենք և կատենք, որ «դա մանկավարժութիւն չէ, այլ բոյթաւորութիւն է»: Սպա եթէ այն վերաբերմունքը մանկավարժական է, ինչով կարելի է բռնատրել այն, որ մի դէպքում, երբ խնդիրը վերաբերում է III դաս. խողբող աշակերտ Յովհաննիսեանի հոսքրած վերաւորանքին (XXVI թ. 2 ապրիլի), երբ մանկավարժ ժողովը և վերաւորումած ուսուցիչը խոստովանում են, որ վերաւորանքը անգիտակցաբար է եղել, երբ տեսուչը զեկուցում է, որ վարչութեան կարգադրութեամբ աշա-

կերտ Յովհաննիսեանը ժամանակաւորապէս (5 օր) հեռացուած է եղել դպրոցից, ինչպէս բացատրել, ասուած ենք, որ այս բոլորը խոստովանելով հանգերձ մանկավարժները որոշում է «որ Յովհաննիսեան պէտք է ներդրուած լինէր իւր անմարդու գործունէութեամբ: Նոյն ուսուցչութիւնն է, որ իր ստոր նպատակներին համակուր և բողոք աշակերտներին ճշելու համար, դպրոցի փակելու և բաց անելու իրաւունքը տալիս է 16 ոչ բողոքաւորներին»: Եւ այս ասուած ենք փաստերի հիման վրայ:

Փետր. 7-ին (դպրոցի փակման ժամանակ) ոչ բողոքաւորները դիմում են բողոքաւորներին հետեւեալ գրութեամբ, որից բերում ենք մի քանի կէտեր. «Ստորագրութիւն տալ, որ եթէ վերոյիշեալ վիճակը չգտնուի միջոցով կը յայտարարէք, որ նոյ. 3-ի միջնադէպի մէջ միակ մեղաւորները քաղաքից բացակայող գլխաւոր վիճակներն են. 3) Որովհետեւ պ. Մեղունեանը բացակայ է քաղաքիցս, ուստի նրա գալուց յետոյ տրուած է Ձեզ իրիւ շարաժմանակ, վիճակին բերի տալու և դասն սկսելու համար. նշանակած ժամանակամիջոցն անցնելու դէպքում ի կատար է ածում երկրորդ կէտը: 4) Երկրորդ և երրորդ կէտերի վերաբերմամբ տալիս էք մեզ գրաւոր փաստաթուղթ (գօկումենտ), ստորագրութիւններով հանգերձ, որից յետոյ անմիջապէս կը վերսկսեն դպրոցական պատասխանընդունի: Չնայած այս բանին, փաստերը ցոյց են տալիս, որ ուսուցչութիւնը չհասու իւր խայտառակ նպատակներին, միայն թէ երկատարողների անաղարտ հոգին լցրեց անբարոյականացնող մեծամտութեամբ, որի հետեւանքն էլ այն եղաւ, որ շատ շատերը զբաղեց (օր. Փոլեան և Նարնեաններ) այնուհետեւ էլ արհամարհելով դպրոցական ամբողջ դիպրոպիւնան՝ վնասեցին թէ՛ իրանց և թէ՛ դպրոցի շահերը: Որ ոչք բոլոր անարգ ու խայտառակ նկուղային գործունէութիւնը չունեցաւ և ոչ մի զբաղման հետեւանք, իրանց տեսական գործերի ղեկավարներին համար գոնէ, զբաղ իրեն փաստ կարող է ծառայել այն, որ այն Բ-րդ դասարանը, որի վրայ էր կառուցած դիւրին մտածողութիւն վերաւորել, դա էլ ոչին:—Մենք չենք մեղադրել և

չենք էլ կարող մեղադրել Բալասըէգեանին նման մի 16 տարեկան պատանու, որովհետեւ այդ մեքենայութիւններն մէջ վարժեցնողը եղել է ինքը՝ բայթալ ուսուցչութիւնը իւր անմարդու գործունէութեամբ: Նոյն ուսուցչութիւնն է, որ իր ստոր նպատակներին համակուր և բողոք աշակերտներին ճշելու համար, դպրոցի փակելու և բաց անելու իրաւունքը տալիս է 16 ոչ բողոքաւորներին*:

Եւ այս ասուած ենք փաստերի հիման վրայ:

* Ս. յ. 46-ից մէկն էլ պ. Զիր-ի ազգական Սուրադեանն է:

թիւները ամբողջ շէնքը, այն Բ-ը դաս, որի անմեղութեամբ էր, որ կարողացան իրանց շաղակաւ ապականութիւնը առ ժամանակ թաքցնել, այդ պարոններն էլ սթաիբուեցին և դրանց մանկական յստակ հոգին էլ չկարողացաւ մնալ դրանց անօրինութիւնների ճնշման տակ, և ահա մայիսի 4-ին—այդ պատանի առաջնորդող այգերը Վ. Տէր Պողոսեան և Տ. Տէր Սահակեան իրանց պարզ ոճով գրած թուուցիկով դալիս են թօթափելու ապականութեան փոշին:

Սա էլ նկուղային դործունէութեան վախճանը:

Վ.

Դ. Կեղեցի, այլասերուած մեքերի եւ մօղնի մանկավարժութեան օրջան:

Սրապոյգ և դժնայ օրերից յետոյ դալիս է փեարուարի 12-ը, աշակերտութեան յաղթական օրը: Դպրոցական խախտուած կարգերը վերականգնուած են և վերսկրուած դպրոցական խաղաղ ու անդորր պարապմունքները:

Երկամեայ մթութեան քողին ապականած կեղծիքների նախակարապետ պ. Մեքոնեան, ճարը կարած, էլի ինքն է հանգէս գալիս: Բողոքող աշակերտների և սրա մէջ սկսուած են գրադրութիւններ II միջնորդ դատարան կազմելու համար, որպէսզի վերջնականապէս (իւր թէ) որոշուի դպրոցական կործանիչ անախորժութիւնների սկզբը—նապաճառը և առիթ աւողը: Փոխադարձ գրադրութիւնները շարունակուած են մինչև մարտի 17-ը, որից յետոյ այնուհետեւ պ. Մեքոնեան լուծւում է: Միջնորդ գատարանի որոշեալ 40 օրը լրանում է ապրիլի 10-ին, լուռ է նա. բողոքող աշակերտութիւնը Մշակում ասում է իւր վերջին խօսքը, էլի լուռ է նա. իրենց մտաւոր անմեղութիւնը իրեն Մ.-ի համար զոհաբերող Բ-ը դադարանցիներ Վ. Տ. Պ. և Տ. Տ. Ս. Մայիսի 5-ին, մի անպաճոյճ կոչով հրաւիրուած են 70 ընկերներին վերկենալ և մեղաւորին երևան

հանել, ասելով «Հեշտ է 70 հագու երեսը սեւացնելը... Թո՛ղ նա սեւանայ և ոչ ամբողջ 70 հոգին»—ձայն ծպտուն չէ լսոււմ. մայիսի 20-ից դպրոցական պարապմունքները դադարում են, աշակերտները սկսում են հեռանալ, գործին տեղեակ մարդիկ և ամենագլխաւոր վկաները ցրոււմ են. էլի լուռ է Մեքոնեան: Վերջապէս դպրոցի արձանագրութիւնները մատեանը (28 արձանագրութիւն արտագրած) անյայտացնում է պ. Չիլ. (սրա պատմութիւնը յետոյ) և ամբողջ մամուլը, բացառութեամբ ծայռի, փակոււմ է: Հրապարակը մնում է ծայռին*) և պ. Մեքոնեանին:

Ահա այդ ժամանակ միայն մեծանուն պ. Մեքոնեան մայիսի 31-ից սկսած—գործին անձանօթ և անտեղեակ հառարակութեան առաջ իրան արդարացնելու համար—ծայռի լայնածաւալ էջերում №№ 3—7 տպոււմ է միմեանց յետեից մի շարք երկար ու բարակ յօդուածներ, որոնց դրական մնակ արժէքը այն է, որ կարողանում է իրեն առանձնայատուկ սիտեմով խեղաթիւրել փաստաթղթերը և կարել եղած դէպքումն էլ սարքել նորերը: Թէ ո՛րչափ ճիւղաղային կերպարանք էր տուել մանկավարժ. ժողովի բանաձևներին և ո՛րպիսի հնարադիտութեամբ էր շարահիւսել նոր գրութիւնները, այդ մասին իւր տեղում խօսուեց: Այժմ էլ կարեւոր է ցոյց տալ այն մեծ զրական շարլատանութիւնը, որ նկատոււմ է աշակերտների և իւր միմեանց գրած նամակների մէջ: Այդ աղաւաղած փաստաթղթերից առ այժմ կը բերնք երկուսը, այն էլ կեղծիքները աւելի պարզ բնորոշող հատուածները միայն: Անցնենք օրինակներին: Պ. Մ.-ի աշակերտութեան դրած Բ-ը նամակը բառ ծայռի № 5-ի այսպէս է. «Չնայած ի սրտէ կը ցանկանայի և ոչ մի առիթ չտալ (բողոքող բառը—բաց է թողած) աշակերտներին հրաժարուելու դատեց կամ կատկածելու (խեղանի մէջ—կատկածել տալ), որ ես մաղաչափ անգամ արամապի եմ դատից խոյս տալ (խեղանի—որ միջ-

*) Կեղծած փաստաթղթերի համար երեք ուսուցչի ատարագրով Թիւրքի գրոււմ է աստիճանակ մի համար հերթում: Այդ բաժնիւն չի ունենում տպել ծայռի խաբարութիւնը:

նորդ դատարանի միջոցով քննուի և դատուի նոյեմբերի 9-ին թեմական դպրոցում պատահած միջնագիշտը) ... որ գոնէ այս միջնորդ դատարանը անաչառ կերպով, առանց կուսակցական (կոնգրեսի մէջ այս բառը չկայ) տենդենցներէ տանէր իւր վրայ վերցած ծանր պարտականութիւնը, ես ստիպուած եմ յայտնել, որ ձեր (առաջարկած—բաց է թողած) երեք դատաւորներին էլ չեմ կարող ընդունել (կսկահանի մէջը—ես չեմ հաստատում): Ձեր առաջարկած երեք դատաւորները իմ կողմից ոչ մի վստահութիւն չեն վայելում (այդ երեք պարոնները իմ կողմից եւ ոչ մի վստահութիւն չեն վայելում) ես դեռ աշունքուանից կտրել եմ նրանց հետ եւս յարաբերութիւնները (եւ վաղուց դադարել եմ նրանց հետ ծանօթ լինելուց): Խարդախած փաստաթղթերէ մէջ ուշադրանքները է նաեւ աշակերտութեան պ. Մ-ին ուղղած Բ-րդ նամակը:—Ընթերցողին էս գլխէն «Թէ բերում եմ անփոփոխ այն ամբողջ դրագրութիւնը, որ տեղի ունեցաւ իմ և աշակերտութեան մէջ» խոստացող նոյն պ. Մ-ի աղաւաղելու ընդունակ ճարպիկ ձեռքն է, որ այդ բնաբանը ղենելով հանդերձ, այսուամենայնիւ շարունակում է իւր սովորական փեշակը—այն է՝ այս անգամ էլ բերում է փաստաթղթի մէջ եղած առարկութիւնները, առանց նրանց հիմնական պատճառաբանութիւնները և այսպիսով խուզում է նամակի ամենակարեւոր մասերը, որից յետոյ նամակը դառնում է մի անիմաստ ցանցառաքանութիւն: Այս մէկ օրինակն էլ բերելով, յուսով ենք, կըրանայ պ. Մ-ի փաստերը խեղաթիւրելու և եղծելու արտակարգ հմտութիւնը:

Անցնենք օրինակին. «...: Դատաւորները մասին առաջադրած ընդ որ պատճառաբանութիւնները մի առ մի ենթարկեցին քննութեան և դատան խախտւած ու միանգամայն զուրկ հիմքից»: Այնուհետեւ բաց է թողած հետեւեալ ամբողջ պարբերութիւնը. «Այ ինչո՞ւ. ա) Դուք պ. Յովհաննիսիանին լոկ չոր ու ցամաք խօսքերով համարում էք հատարակութեան շահերին վնասակար անձնաւորութիւն—առանց որեէ հիմնական փաստի: Թէ երբ և իցէ՞ մամուլում կռիւ էք մղել դուք նրա դէմ, այդ բանն էլ մեզ համար հանելուկ է, բոլորովին անյայտ այդ էջերը». Իսկ

(պէտք է ասենք, որ մինչև Ձեր ղեմումը պ. Յ. Յ. յարգելի պատճառաբանութեամբ հրաժարուել էր)» բնագրի մէջ փակագծով բերած այս մասը—բնա պ. Մ-ի դուրս է գալիս ծայրում առանց փակագծի, իբրև գլխաւոր և վերջնական առարկութիւն: «Ը» պ. Հ. խաչատրեան ...: Նա միշտ վայելել է ձեր վստահութիւնը (նա վայելել է ձեր վստահութեան ըուէն)»: Հետեւեալ ամբողջ պատճառաբանեալ պարբերութիւնը գլխաւորեալ կերպով կրկին բաց է թողած. «Երկրորդ քարտուղարի ներկայութիւնը անհրաժեշտ էր դառնում տեխնիքական յարմարութիւններ ստեղծելու համար: (Սա փաստ է, որին կարող է վկայել Միշ. Դ.-ի այդ օրուայ նիստի արձանագրութիւնը, երբ քարտուղարում էր պ. Լ. Գեանջեան)»: *

«Գ» պ. Մ. Տ. Մրտչեանի նկատմամբ դուք լռում էք և նրա հասցէին միայն մի քանի մութ ակնարկներ էք ուղղում (որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ անտեղի վերաւորանքներ): Փակագծինը ամբողջովին բաց է թողած:

«...», որոնք (բաց է թողած—փոխադարձ համաձայնութեամբ) ընտրելու են մի նախագահ: Իսկ թէ ինչո՞ւ ընտրութիւնները թղթին ստորագրում են միայն ներկալ յացուցիչները, խառն ժողովը այդ իրաւունքը վերապահում է իրեն: (Ամբողջի ստորագրութիւնը տրուելու է միջնորդ դատարանին): Փակագծինը—կրկին բաց է թողած:

Ահա այս Մեքքեանի ազիւ խաթեր համար էր, որ մեծ ծամանական մանկավարժները ամբողջ դպրոցը քարուքանդ արին, աշակերտներին թշնամի բանակները բաժանեցին, դպրոցը ամիսներ շարունակ փակել տուին և դեռ մինչև տարուայ վերջն էլ—տեղի ընկած տեղը էլի չեն դադարում Մ-ի խնդիրը մէջ բերել (29 ժողով) դպրոցական անյետաձգելի հարցերի լուծումը խափանելու համար: Գերի դարձած այս աւերիչ մտքերին և հրապուրուած պ. Մ-ի փեշաքարութեամբ, մազաչափ անգամ չեն կամենում յետ մնալ նրանից իւր անձնուրաց մարտակից և մեղսակից ընկեր մեծամասնականները, որոնց անուանի գործերից պէտք է շարունակենք էլի խօսել:

*) Փակագիծը քննարկին է:

XXIII ժողովում, փետր. 23-ին. Մ-ի միջնադէպի պատճառով ինքնակամ հեռացող աշակերտներ՝ Մ. Տէր Ղազարեանին և Յ. Հայրեանին մանկավարժական ժողովի անունից, բայց նրանց ծածուկ, սուսած վիպադրամները մասին պ. նախագահը տալիս է հետևեալ (!) բացատրութիւնը. «Հեռացող աշակերտներին վկայականներ է տուել վարչութիւնը և որովհետեւ պատրաստի նոր բլանկներ չեն եղել, ուստի տուել են հին բլանկներ, որտեղ քի միջի այդոց գրուած է մանկավարժական ժողովի կողմից: Ամբողջ Թիւրիմացութիւնը նրա մէջ է կայանում, որ բլանկները հին են»: Սա է հարկէ պ. նախ-ի կարծիքն է, սակայն մենք կատենք, ինչպէս որ նախկին և յետագայ փաստերն էլ ցոյց են տալիս, որ պ. Չիլինկարեան, փոխանակ տարուայ սկզբին և եթ իւր բիւրօյապետի, ժանգարմէական և փաստերը կեղծելու արուեստի ծրագրից խօսելու, թիւրիմացութեամբ ինչ որ ընկերական—ընկերային անձանցից գաղափարներից էր ճառում: Ահա թէ որտեղ է խնայալէն թիւրիմացութիւնը: Որ այս այսպէս է, որա համար էլ կան էլ բազմաթիւ փաստեր ևս: Հէնց այդ տեսակ փաստերից մէկն է Միքայէլ Թիւնիբէգեանին զաղտագողի կերպով Զ. դաս. տարան ման վկայական տալը, որը նոյնպէս Մանկ. ժողովի անունից է եղել: Բայց նրանից ծածուկ: Այս ոտոր կեղծիքը պատահամբ բացուում է ուսումնական տարուայ վերջում, 32 ժողովում, մայիսի 28-ին, կեղծիքը կատարելուց ուղիղ 4 ամիս յետոյ: Պ. Չիլ-ը իւր այս երկրորդ զղուելի կեղտոտ արարքը ծածկելու համար էլի մի նոր ոտախօսութեան է դիմում, որ իբր թէ «Թիւնիբէգեանի համար որոշում է կայացել, որ նա կարող է քննուել Թոյլ առարկաներից եւ վկայական տալ նախ»: Չնայած այդ ոտախօսութիւնը տեղն ու տեղը ուսուցիչներ Մ. Տ. Մ. և Յ. Տ. Յ. ընտնում են և յայտնում են իրենց ցաւակցութիւնը, որ մանկ. ժողովը վկայական է տալիս առանց իմանալու, որ մանկ. ժողովի իրաւունքները ոտնակոխ են լինում, այսուամենայնիւ կեղծասիրութեան ընտելացած պ. Չիլ-եան առանց ամաչելու դարձեալ շարունակում է պնդել «Որոշում եղել է և այդ որոշման համաձայն նրան վկայական է տրուել հոգաբարձութեան քարտուղարի ստորագրութեամբ»: Ամբիւս (!)

Չիլ-ը բժաւոր տեսութեան պերեսպեկտիվը ուղիղ տալու համար յիշենք այսպէս նոյն աշակերտ Թիւնիբէգեանի մասին եղած պաշտօնական որոշումները: Վ ժողովը (սեպտեմբեր 20) արձանագրութեան մէջ կարդում ենք. «...» Յայտնում է, որ աշակերտ Թիւնիբէգեանը անցեալ տարի յաճախել է դպրոց միայն 1 1/2 ամիս, մանկավ. ժողովը որոշեց. թոյլ տալ աշակերտ Թիւնիբէգեանին քննութիւն տալ բոլոր առարկաներից, միայն նախադրուշացնել կանխաւ նրան, որպէսզի նա իմանայ, որ մանկ. ժողովը ձեռնադրեց նրան չի նայում նրա վրայ, իսկ եթէ նա որոշում է մնալ դաստրանում, կարող է մնալ»: Պետ չենք ասում III ժողովը արձանագրութիւնը, որտեղ աւարտման վկայական տալու համար Մանկավ. ժողովը որոշում է. «մերժել վերջին և տարեկան թուանշաններ չունենալու պատճառով»: —Այսպիսի ակնյայտն ճշմարտութիւնից յետոյ—միայն Թոյլ առարկաներից քննել եւ մանկ. ժողովից զաղտնի տալ աւարտման վկայական, դա հնարաւոր է միայն Զ.-ի նման դրական գործունէութեան անընդունալ և թայֆայականութեան ձեռքին կոյր գործիք դառնալու ստիպման համար ժամներին: —Սակայն մի թէ նոյն կեղտոտ թայֆայականութեան արդիւնք չպէտք է համարել Զ. դաստրանի ազատ ունենալը Ա. Գաղաթեանի խնդիրը այն տեսակէտից, որ քանի դեռ Մ-ի հռչակաւոր կոնֆլիկտը չէր եղել, նոյն մեծամասնականները, որ երկու անգամ (III և V ժող.) կատեղորեկ կերպով, գրեթէ միտմայն (13 ձայնով—ընդդէմ 3-ի) որոշում են, թէ «Առանձնապէս Ա. Գաղաթեանին թոյլ տալ ազատ ունենալութիւն չի կարելի...» և երրորդ անգամ միայն կոմիտայի միջոցով նրա անխեղալ պատճառաբանութիւնները քննելուց և Զ. դաստրանիները կոլլեկտիւ պայմանական դիմումներն ինկատի առնելուց յետոյ հաղիւ հաղ համաձայնում է ժողովը հետևեալ պայմանով, որ խոսկան աշակերտ լինելու համար պարտաւորւում է «Յունուարին քննութիւն բռնել այն դասընթացից, որ կանցնի VI դ. մինչև յուն. և VII դ. այն առարկաներից, որոնցից նա պէտք է վերաքննուի» (V ժող.): Ա. Գաղաթեանին ազատ ունենալը անգամ չընդունող պարտնները—կոնֆլիկտից յետոյ—չէ թէ միայն իսկական

աշակերտ են ընդունում, այլև նրա ձայնին առանձին ար-
ժէք են տալիս թէ՛ հոգարարութեան և թէ՛ մանկավարժական
ժողովներում էլ պարճանքով են յիշում, որ ոչ բողոքա-
ւորները 23 հոգի են (իմա հէնց երկուսը միայն ազատ
ունկընդերներն՝ մէկը այս Ա. Գ. իսկ միւսն էլ Չլիլինկար-
եանի ազգական Մուրադեանին): Դեռ այս էլ ոչինչ. գալիս
է Յունուարի 8-ը, երբ մանկիվ. ժողովի որոշման համաձայն
պայմանական քննութիւն ունեցողները պէտք է տային
իրանց քննութիւնը: Որովհետեւ, զժբախտաբար, դրանց
թուում էին յիշեալ Ա. Գառպարեանը և Նարինեանները
IV դա. Նարինեանը, ուստի անուշադրութեան է մատ-
նւում այդպիսիներէ հարցը: Փետր. 12-ից, դպրոցի վերա-
բացումից յետոյ դարձեալ դպրոցի Տեսուչ և Զ. դաս-
դաստիարակ Չլիլ-ը ոչինչ չէ կարգադրում այդ մասին:
Երբ փետր. 23-ին 23 ժողովում գրում է այն հարցը,
թէ ուսումը շարունակելու համար պէտք է քննութիւն
տան մի շարք աշակերտներ, որոնց թուում է Ա. Գ. այդ
ժամանակ պ. Զ. անդիտակ ձեւանալով խնդրում է պ.
դաստիարակներին յայտնել վերոյիշեալ աշակերտներին այդ
մասին (երբեք թէ ինքը դաստիարակ չէ): Այս մանեօվն էլ
է անցնում. գալիս հասնում է մարտի 25-ը և երբ այդ
օրուայ XXV Ժ. խօսք է լինում Ա. Գ.-ի մասին, պ. դաս-
տիարակ—Տեսուչ Չլիլ-ը առանց կարմրելու յայտարար-
ում է, որ ինքը նրան ճանաչել է մինչև այժմ խոսկան
աշակերտ, միշտ էլ դաս է հարցրել և իբրեւ դաստիարակ
անունն էլ գրել է Զ. դ. դասարանական ցուցակում: Այս
կատակերգութեան վերջ դնելու համար մանկավ. ժողովը
ստիպուած է լինում երկրորդել իւր որոշումը. «Ա. Գառ-
պարեանին չճանաչել աշակերտ, այլ իբրեւ ունկնդիր, մին-
չև որ նա քննութիւն տայ որոշուած առարկաներից»:
Յոյս կար այնուհետեւ, որ այդ եզրուիտութիւնը դրանով էլ
կվերջանար, սակայն երբ թերթում էր դպրոցի յառաջա-
դիմութեան ընդհանուր մատենանը, Զ. դաս. երկամսեակ-
ների թուանշանների մաքուր թերթը և անուանական
ցուցակները—բոլոր տեղերում էլ Զ. դ. շարքում գրած են
և այս րոպէիս էլ կան այդ Ա. Գ-ի անունը և շատ հաւա-
նական է այժմ թուանշաններ գրած կը լինին շատ առար-

կաներից, ինչպէս այդ արել էր մեծամասնականներից մէկը
դեռ այն ժամանակ, երբ արդէն ժողովներում խօսում էր,
որ նա աղատ ունկնդիր է: Բայց, զժբախտաբար, այս ո-
րոշումները չեն միայն, որ գործադրութեան միջոցին
ստանում են միտումաւոր գունաւորումներ, այդ կարգին
պատականողներն անհամար են: Հէնց վերցնենք աշակերտ-
ներ Ա. Փօլեանի և Վ. Նարինեանի մասին (ոչ բողոքաւորներ)
XXV Ժ., մարտի 25-ին կայացրած որոշումը: Ուսուցիչներ
պ. Գրիգորեան և Յովհաննիսեան վկայում են ժողովին, որ
յիշեալ աշակերտները շարունակ բացակայում են *) իրաց
դասերից. պ. Յ. մինչև անգամ նկատում է «որ վերոյիշեալ
աշակերտները բացակայութիւնը այլ կերպ չի կարելի բա-
ցատրել, եթէ ոչ բօյկոտի տեսակէտով, քանի որ նա միշտ
տեղեկացել է միւս դասատուներից, որ նրանք միւս դա-
սերին միշտ ներկայ են եղել, այն ինչ իւր դասերին ոչ
մի անգամ, նա պարտք է համարում յայտնել մանկվ.
ժողովին, որպէսզի ապագայում, եթէ դադարի նրանց
աշակերտ ճանաչելուց, իրան չմեղադրեն»: Մանկվ. խոր-
հրդի անխղճնապահ (!) մեծամասնական պ. Տէրաթեան
ներելի տգեղ երեւոյթի առաջն առնելու համար (առա-
ջարկում է ապագայի համար) հետեւեալ միջոցը. «Եթէ աշա-
կերտը շարունակ երկ Ժամ մի որեւ առարկայից բացակայէ, նրան
նկատողութիւն անել. պ. նախագահ աւելացրեց, որ պ դաս-
տիարակները պէտք է իւրարանջիւր օր տեղեկանան բացակայողնե-
րի մասին, ուղարկին նրանց յետիւից, իսկ հետեւեալ օրը բացա-
կայութեան պատճառները իմանան. եթէ աշակերտը երկ Ժամից
աւել բացակայ է, նրան պատասխանատուութեան ենթարկել»:
Ինչպէս յարգելի ընթերցողը տեսնում է — ճառախօս
մանկավարժները բուն նիւթից շեղուելով ապագայի հա-
մար ինչ որ անորոշ պատժական օրէնքներ են մշակում:
Այս անտեղի շեղումը տեսնելով, ակամայից առաջ է դա-
լիս այս հարցը. ի՞նչ էր այս խուսափման պատճառը. ար-
դեօք այն, որ բօյկոտի համար բերած փաստերը անբաւա-
րար են, թէ՛ արդեօք այն, որ հարցը պարզ չէր դրած—

*) Այդ միեւնոյն քանի մասին յայտնել էր նաեւ Լ. Գևան-
չեցեան:

զըստ համար էին չուներն ընկել: Ի հարկէ, մէջ աջտ էր, ոչ այն: Այդ խարդախամբն և աչառու մանկավարժական մօզնի որոշումները յայտնօրէն երեւան դալը սկսու հռչակաւոր նայեմբերեան հօնֆլիկտից յետոյ թայֆայական ներելի և աններելի յանցանքները քողարկելու և աշակերտի բացայայտ ամարդի վերաբերմունքներն սանկցիա տալու համար: Դրանով է պէտք է բացատրել այն, որ քանի զեռ չկար Մ.-ի հօնֆլիկտը, էլի նոյն Նարինեանի վերաբերեալ, էլի նոյն պ. Տէրտրեան VII ժող. 25 սեպտ. ճառում էր «Նա անցեալ տարի առհասարակ չի պարապել եւ չի էլ կարող պարապել» և էլի նոյն Ձիլինկարեանն էր, որ պնդում էր. «Երեւանի թեմական դպրոցում Վարդաշակ Նարինեան չէր պարապում» և վերջապէս էլի նոյն նախագահը և նոյն ուսուցիչներն էին, որ որոշեցին «ընդունել նրան այն պայմանով, որ ինի զոտապահ եւ պարապի. հակառակ դէպքում կը հեռացուի դպրոցից»:

Անճշտապահութեան և անկանոն պարապելու համար աշակերտին դպրոցից արձակող իդէալիստ լուծմբը, բոյկոտի փոստերը լսելուց յետոյ անգամ մէջ միայն պատժի մասին մտածելն է աւելորդ համարում, այլ և քննութեան նիւթ դարձնելն էլ ժամավաճառութիւն է համարում: Յիշեալ յանցաւոր աշակերտներն էլ քաջ ուսումնասիրած լինելով թայֆայամու տեսչի և K⁰-ի հայդուկային մօզնի մանկավարժութիւնը—նոր որոշումից յետոյ էլ մինչև տարուայ վերջը շարունակում են 3 ուսուցչի դասերն յաճախել, իսկ 3-ին ոչ:

Խստապահանջ և դպրոցական զիսցիպլինի նախանձախնդիր—վարչութեան գլուխ պ. Զ. Թէ՛ բոյկոտը և Թէ՛ նման զիստաւորեալ անկարգութիւնները բնում խեղդելու համար—վերջին որոշումները շարաթներ յետոյ միայն, (Էրբ էլի շարունակում են չգալ) շատ հանգիստ հոգով—ապրիլի 13-ին. 28 ժող. վերջում զեկուցում է, «Որ Փօլեանին և Նարինեանին յայտնել է նրանց բացակայութեան մասին և ասել է, որ եթէ այդպէս շարունակեն, վերջը Մանկավ. ժող. իւր որոշումը կանէ այդ տնութիւն» և խիղջ փակում ժողովը: Մի կողմ թողնելով 2-ի որոշումները—նկատմամբ ունեցած կեղծեկացաւը, (որը և արել է ինչպէս ասում էր, յիշեալ որոշումը յայտնելիս), բաց սառ-

նասրտութեամբ չի կարելի նայել զրա ափաշկարայ ցոյց տուած հայդուկային—ապականիչ մեթօդին: Այն է՝ ժողովի որոշումը յայտնելիս—իրան և բոլոր Զ. դաս-ի աշակերտներն ներկայութեամբ աշակերտ Փօլեանը ասել է, թէ «Ես արհամարհում եմ Զ. Յովհաննիսեանին, զրա համար էլ չեմ ուզում զրա դասին գալ» (30 ժողով). [(փակադի մէջ ասենք, որ ինչպէս զեկուցում է, Գեանջեցեանը՝ ուրիշ ժամանակ էլ նրա հասցէին ասում է էլի նոյն աշակերտը՝ ում դասին գամ չգամ, զրա դասին որ չեմ գալ)]: Խօսքերի մասին ոչ ինքն է որևէ մի բան կարգադրում, ոչ ժողովին է խորհրդածութեան նիւթ դարձնում, և վերջն էլ, երբ պ. Յ. Յ. դասարանում պաշտօնապէս լսելուց յետոյ—կամենում է քննութեան նիւթ դարձնել, այդ ժամանակ խարխալելով, էսօր էդուց ձգձգելով աշխատում է նոր հոգ պատրաստել, որ կարողանայ այդ ոչ աշակերտական յանցադորժութիւնը անպատիժ թողնել: Այս զիստաւորութեան անմիջական հետեանք պէտք է համարել այն տեսակէտը, որ յառաջ բերին Գ. Տէր Գէորգեանի խնդիրը պաշտպանելիս: «Երբ ժամ իրար վրայ մի որևէ դասից բացակայողին պատասխանատուութեան և նկատողութեան ենթարկող (25 ժող. 25 մ.) պարոնները մայիսի 6-ին էլ—28 ժողովում 4 ամիս բացակայող Գ. Տէր Գէորգեանի բացակայութեան պատճառները իսպառ զանց առնելով յայտնում են այն կարծիքը որ «բաւական է պահանջել նրանից 4 ամսուայ ընթացքում անցած դասընթացից քննութիւն և աշակերտ համարել»: Օպպօզիցիայի զօրեղ պատճառաբանութիւնից յետոյ և քողարկուած ծրագիրը պախարակելուց յետոյ—տապալուում է տեսչական արդէն անցած տեսակէտը և Բ.-ը քուէարկութեան ժամանակ բոլոր մեծամասնականները իրենց ամբողջ կամպանեայով, բացառութիւն տալու ահեղ սարսափից դարհուրած, այժմ համաձայնում են օպպօզիցիայի տեսակէտի հետ, այն է՝ «պատճառները կարեւոր է խմանալ»: Այս հիման վրայ էլ—կայանում է միևնույն: Այս ֆօկուսիկութեան անցաւոր էլքը ստիպում է անդուգական տեսչին մի այլ ճանապարհով իրկել Ս. Փօլեանին: Դրա համար էլ, գոտերը դադարելուց

յետոյ, մայիսի 22-ին տուանց ժողովի ղեկավարութեան իրան տեսչական իրաւունքով դադարն կերպով կարգադրում է 1. Գեանջեցեանին քննել զբան և երկամսեակ ու տարեկան թուանշան դնել: 1. Գեանջեցեան, անձայն կատարում է տեսչական հրամանը—տակայն կլիսածանապարհի իմացում է այդ ժանդարմէական կարգադրութիւնը և զբում իսկոյն ժողովի քննութեան (30 ժողով, 22 մայիսի): Չնայելով ժողովի սկզբից մինչև քուէարեութիւնը դամբեաշների ղեկավարները 2. և 8. գլուխ են պատարում ապացուցանելու, որ Փ-ին իրաւունք ունէր քննելու պ. 1. Գեանջեցեան և չնայելով մէջ են բերում այն ապօրինի տեսակէտները, «որ Փօլեան ճանաչում է իբրև աշակերտ, ուստի դատաւոր ուսուցիչը իրաւունք ունի նրան քննելու... նա աշակերտ է, որովհետև թուանշաններ է ստացել համարեա բոլոր աղարկներից, իսկ բոյկոտի խնդիրը առանձին խնդիր է», այսու պէսնայնիւ մի լու խայտառակելուց յետոյ կրկին մեզ հետ միասին միաձայն որոշում են «Որ Փօլեանի տուած քննութիւնը անվաւեր համարուի, մինչև որ քննուի նրա գործը» (30 ժ. 22 մայ):

Այսպէս Փօլեանի խնդիրը այդ ժողովում էլ մնում է առկա, բայց 31-րդ ժողովում, երբ հարցը գալիս է Ե-րդ դաս. բոլորովին անկանոն կերպով դասերին յաճախող երեք աշակերտների մասին, անխուսափելիօրէն մէջ է գալիս կրկին Փօլեանի և Նարինեանների հարցը: Չեւ.ք ուստի ընկած մեծամասնական ֆրակցիան ասպարէզ է գալիս իւր բոլոր հայդուկային, բայթարկական և ամենավերջին մօդին մանկավարժութեան պեսակէտներով: Արեւն քրտինք մտած դուրս են բերում իրենց մարի մէջ ամբարած ամբողջ թոյնը և բացառական անգին հայեացքները, սակայն այդ ամենը ապարդիւն անցնելուց յետոյ բազմաբանակ մունջ մատներով յաջողում է մի օր էլ յետաձգել այդ խնդիրը: Այս պատմաւում էլ երկար ու բարակ առարկութիւններից ու պարզաբանութիւններից յետոյ, այսուամենայնիւ դործի քննութիւնը յանձնում է կոմիտիայի: Նախ քան քննութեան արդիւնքին անցնելը, անհրաժեշտ ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին

ընն 1. 4. Թ. դպրոցի մանկավարժների հայդուկային մանկավարժութեան հետ:

Անցնենք իստներին: Բոյկոտաւոր աշակերտները վերաբերմամբ պ. 8. Պետրոսեան և 8. Ս. Յակովբեան առարկում են. «Եթէ իրօք ապացուցուեց, որ նրանք բոյկոտի կամ կամայականութեան շնորհիւ բացակայել են դասերից, ժողովը պէտք է որոշէ չճանաչել նրանց աշակերտ մինչև որ նրանք քննութիւն տան բոլոր առարկաների դասընթացից»: Պ. Տէրտէրեան առարկեց, որ աշակերտի մի առարկայից բացակայելը կարող է ազդել միայն այդ առարկայի թուանշանի վրայ և ոչ մնացածների կամ ամբողջ դասարանական դասընթացի վրայ...: Պ. Մ. Ս. Մ. հարց դրեց պ. Տէրտէրեանին, թէ քանի աշակերտ պէտք է լինի, որ պ. Տ. պարապի դասարանում: Պ. Տ. պատասխանեց, որ անհրաժեշտ է դասարանի մեծամասնութեան ներկայութիւնը: Պ. Մ. Ս. Մ. առարկեց, որ պ. Տ. հակասում է, եթէ մի բոպէ ենթադրենք, թէ պ. Տ-ի կարծիքը ճիշտ է, այն ժամանակ դժուար չէ եղբակացնել հետեւեալը. դպրոցը պէտք է դառնայ ազատ պարապմունքների վայր. ցանկացողը պէտք է գայ պարապի չցանկացողը ոչ որովհետև այդ դէպքում աշակերտները ենթարկուած չեն լինելու ընդհանուր գիտելիքին, որ անհրաժեշտ է դպրոցական կարգ ու կանոնի համար: ապա ուրեմն նրանք համարձակ կարող են որոշ դասերի գալ, իսկ միւսների դասերին չգալ, մի բան, որ նրանց այդ չգալը չի արդելում ընդհանուր գիտելիքին տեսակէտից և նրանց մեծամասնութեան ներկայութիւնը իրապէս կը լինի անգործական, մի հանգամանք, որ առնուշտ արդելը է հանգիստիալու կոնսիսաւոր պարապմունքների համար և միւսնայն ժամանակ արդելը մանկավարժական այն օրէնքին, որ ընդունում է ինքը պ. Տ., այն է աշակերտների մեծամասնութեան ներկայութեան անհրաժեշտութիւնը: Պ. Յ. Յովհաննիսեան յայտնեց հետեւեալ միտքը. «ազատ ունիդիրները վերաբերեալ որոնց նկատմամբ ուսուցիչը պարտադիր չէ առանձնապէս աշխատելու, որոշուել են կանոններ, որով նրանք պարտաւորւում են դպրոցական ընթացիկ կեանքի օրէնքներին ենթարկուելու. եթէ այդ այդ»

պէս է, ապա ինչպէս աշակերտները կարող են խախտել այդ կանոնները. երբ որ մի աշակերտն յանցանքը կամ վարմունքը խախտող մի գործօն է հանդիսանում ընդհանուր դպրոցական կարգերի, այդ դէպքում կարեւոր է նրա վարմունքը վրայ առանձնապէս ուշադրութիւն դարձնել և առանձնապէս քննել այդ վարմունքը: Համալսարանը, որ համալսարան է, ունի իւր ընթացիկ կանոնները և ամէն մի ուսանող օրգինար դասախօսութիւնից քննութիւն տալու համար պարտադիր է ներկայ լինել այնտեղ և լսել դասախօսութիւնները սահմանափակ որոշ ժամանակի ընթացքում»:

Պ. Խաչատրեան յայտնեց հետեւեալ միտքը. «Եւրաքանչիւր աշակերտն պարտականութիւնն է կանոնաւոր յաճախել դասերին և սովորել աւանդուող առարկան. դասնախօսի մի չորրորդական ճշմարտութիւն է, որ չի կարող ժխտել ոչ մի ուսուցիչ, եթէ նա իրան անուանում է մանկավարժ. եթէ մի աշակերտ չի կատարել իւր այդ ամենատարրական պարտականութիւնները, պարզ է, որ նա չի եղել աշակերտ և իւր վարմունքով խախտող է հանդիսացել դպրոցական կարգերի. այդ տեսակետից նա պատասխանատուութեան պէտք է ենթարկուի. և եթէ իրօք նա չունի լուրջ և յարգելի պատճառաբանութիւն, պէտք է դուրս գայ աշակերտների շարքից, ունենալով իրաւունք քննուելու իբրեւ ազատ քաղաքացի բոլոր առարկաներից: Ո՛չ մի մանկավարժ ուղղակի թէ անուղղակի կերպով նպաստելու կամ զարկ տալու աշակերտի այդպիսի տմարդի վարմունքին ոչ մի բարոյական իրաւունք չունի, այլ հակառակը, նրա բարոյական պարտքն է ցոյց տալ աշակերտին իւր տեղը և յեշեցնել նրան իւր մոռացած պարտականութիւնները»:

Պ. Վարդապետեան առարկեց հետեւեւ. «Բարոյականութիւնը չտէտք է առգելադիմ հանդիսանայ գիտութեանը: Բարոյականութիւնը գնում է գիտութեան հետեւից. աշակերտը կարող է այս կամ այն պատճառով չգալ դպրոց, սակայն ուսուցիչը պարտաւոր է նրան քննելու, գուցէ նա առարկան լաւ դիտէ: Պ. Նախադահ յայտնեց հետեւեւ միտքը. բացակայել են արդեօք յար-

գելի պատճառներ շնորհիւ, թէ կամայականօրէն, երկու դէպքումն էլ նրանք յանցանք են դորձել. ուստի նրանց խնդրի նկատմամբ վճռական որոշում պէտք է կայանայ ուսուցչի հայեցողութեան համաձայն. ուսուցիչը կարող է նրանց թոյլ նշանակել, կամ պէտք է որոշել, որ նրանք գուրս գան և ժամանակին քննութիւն տան»:

Պ. Յովհաննիսեան նկատեց, «որ դասարաններում կան շատ աշակերտներ, որոնց երեսը տեսնելը այնքան էլ իրան համար հաճելի չէ, սակայն ինքը իբրեւ դասատու միշտ միեւնոյն աչքով է նայել բոլորի վրայ. իսկ աշակերտը թքի իւր իւր երսին, արհամարհէ իրան և ինքը շարունակէ դաս հարցնել նրանից կամ քննէ նրան, դա մանկավարժութիւնն չի համարում, այլ բայթալութիւն»:

Պ. Վարդապետեանն այն կարծիքի դէմ, թէ «բարոյականութիւնը արգելադրւի չպէտք է հանդիսանայ գիտութեան»:

պ. Մ. Տ. Մկրտչեան առարկում է. «... փաստերը ցոյց են տալիս, որ երբ ուսուցչի պատիւը ընկած է, որքան էլ նա լաւ դասատու լինի, այսուամենայնիւ դասատուութիւնը անկարելի է դառնում. նախ անհրաժեշտ է վերահանգնել դասատուի ընկած պատիւը և ապա հրաւերել նրան դասաւանդել. այդ է պահանջում իսկական մանկավարժութիւնը և մանկավարժօրէն վերցրած—գիտութիւնն է հետեւում բարոյականութեան և ոչ բարոյականութիւնը գիտութեան»:

Պ. Տէրտէրեան յայտնեց հետեւեւ միտքը. «Եթէ աշակերտները բացակայում են, նրանք անշուշտ ունին պատճառներ. այդ պատճառները կարող են տարբեր լինել. բայց նրանք պատճառ են, ղիցուր մի աշակերտի համար կարող է ինքնապաշտ լինել մի որ եւ է ուսուցչի դասին ներկայ լինելը. նա չի կարող զալ այդ դասին եւ եթէ ներկայ էլ լինի նրա մտքերը ուրիշ տեղ են թափառելու. եւ երբեք չի օգտուելու դասից. հէնց մանկավարժական տեսակետով առաջնորդելով խիստ քիւրօ-կրատիկ վարմունք կը լինէր չմտնել այդ աշակերտի բացառիկ զրուծեան մէջ եւ պատժի ենթարկել նրան»:

Պ. Տ. Յ. և Պետրոսեան հարց տուին պ. Տ.-ին—ի՞նչ է այդ բացառիկ զրուծութիւնը. պ. Տ. շարունակեց. «Երբ մի աշակերտ բարոյապէս անզօր է ներկայ լինելու դասին, նա ունի ինչ պատճառը եւ այդ պատճառը իբրեւ պատմաւ պէտք է յարգելի լինի. ղիցուր

աշակերտը արհամարհում է, այդ հանգամանքը իրրեւ պատճառ պէտք է ի նկատի առնել եւ դորա համար պատժել նրան կլինի հակառակ մանկավարժութեան եւ բնութեան վարմունք. ուստի եթէ աշակերտը մի որեւէ առարկայից բացակայել է, նա կարող է քննութիւն ապա և նրա բացակայութիւնը կապ ունի առարկայի, դասի հետ, և ոչ ուսուցչի հետ: Եթէ այդ չեն ուղղում ընդունել, պարզ է, որ այստեղ դիտաւորութիւն կայ խեղճելու մի քանի աշակերտները»: Պ. Տէրտէրեանի խօսքերի առթիւ պ. Յովհաննիսեան իւր զարմանքը յայտնելով դիմեց պ. Տէրտէրեանին հետեւեալ խօսքերով. «պ. Տէրտէրեան, ես ձեզանից այդքան չէի սպասում, այդ տեղը հասնի»: Պ. Տէրտէրեան առարկութեան փոխարէն պ. Յովհաննիսեանին և նրա համախոհակիցներին հասցէին արտասանեց խիստ վերաւորական և անվայել խօսքեր. «Անվայել վերաւորանքի պատճառով կրքերը բորբոքւում են և շատերը զայրացած կամենում են հեռանալ ժողովից. ահա այդ ժամանակ, այդ խնդրում ամէնից չեւոք ուսուցիչ պ. Ս. Գեանջեցեան անդամ անկարող լինելով տանել այդ և բացարձակ հայդուկային տեսակետը, և փողոցային լիտի հայհոյանքները», վերցրեց հովանոցը և խփելով սեղանին ասաց հետեւեալ խօսքերը. զո՛ւր է, դուք պարոններ, ձեր այստեղ նստելը. կեղծ է ամեն ինչ, և այդ կեղծիքով դուք ո՛չ մի որոշման չէք յանդի. եթէ Փօլեանի, Նարնեանի խնդիր չլինէր մէջտեղը, այսքան բան չէր պատահի»: Այս անսխորժ տեսարանից յետոյ թէպէտեւ ժողովը շարունակում է մի անդամ էլ կրկին լրացուցիչ փաստերով ցոյց տալ, որ յիշեալ աշակերտներին չգալը բացարձակ կամայականութեան և բոյկոտի արդիւնք է և չնայելով առաջարկում է ժողովին, թէ «Անհրաժեշտ է, որ ժողովը բաւականանայ բերած փաստերով և այդ հիման վրայ որոշում կայացնի», այսուամենայնիւ ժողովը որոշում է 9 ձայն ընդդէմ 6-ի «քննել աշակերտներին բացակայութեան պատճառները»:

Բացակայութեան պատճառները համար քննութիւն պահանջող պարոնները մի օր չանցած, 32 ժողովում էլ ուրիշ դուրույն են փչում: Վերցնենք հէնց անդուգական տեսչի ձառաքանութիւնը, որ ասում էր. «Անցեալ անգամ

ասուել էր քննութեան ապարդիւն լինելու մասին (լաւ է, որ գոնէ այժմս խոտովանում են) և այդպէս էլ եղաւ... մնում է միայն կարգաւ փաստական տեղեկութիւնները և ըստ այնքա որոշում կայացնել—բացակայող աշակերտներին վերաբերեալ»: Իսկ բաղմամտփոխ Տէրտէրեանն էլ այն կարծիքին է, «Որ քննութիւնը վաւերական չի համարում, քանի որ նա կրքով է տարուել, ուստի ժողովը անմիջապէս պէտք է անցնի քուէարկութեան (այժմ արեւմտեան տը) երկու արտայայտութեան կարծիքներին. 1) Պէտք է արդեօք բացակայող աշակերտները քննութիւն ասն բողոք առարկաներից, թէ 2) կարող են քննուել միայն այն առարկաներից, որոնց դասերին բացակայել են»:

Օպպոզիցիայի անդամները ի պատասխան նրեամիտ մանկավարժներին յայտնում են հետեւեալը. «Կարգաւ միայն այն փաստական տեղեկութիւնները, որոնք վերաբերում են անհատ դասատուներին և ի նկատի չառնել քննութեան ամբողջ արդիւնքը, դա նշանակում է չմտնել աշակերտներին յանցանքի քննութեան մէջ և չիմանալ, արդեօք բացակայել են նոքա որոշ պատճառներ շնորհիւ, թէ կամայականօրէն. քանի որ այդ հանդամանքը մի շատ կարեւոր հանգամանք է և քանի որ որոշում է կայացել բացակայողների պատճառաբանութիւնը իմանալ, ուստի անհրաժեշտ է ի նկատի առնել քննութեան ամբողջ արդիւնքը *) և ասլա որոշում կայացնել... սակայն եթէ ժողովը չի ցանկանում մտնել այդ յանցանքի բուն էութեան մէջ և վճիռ պէտք է կայացնի առանց որեւէ լուրջ հիմքերի և պատճառաբանութեան... այդ դէպքում բոյկոտ ապացուցող անմիջապէս խաղաղօրէն անցեալ ժողովում բերած փաստերով, աշակերտ չեն ճանաչում բացակայողներին և չեն մասնակցում քուէարկութեան»: Հարցը դրւում է քուէարկութեան և չեն մասնակցում քուէարկութեան պ. պ. Յովհաննիսեան, Մ. Տ. Մկրտչեան, Խաչատրեան, Պետրոսեան, Յ. Տ. Յակովբեան, Գրիգորեան և Ա. Գեանջեցեան: Պ. Լ. Գեանջեցեան մնում է ձեռնպահ հետեւեալ պատճառաբանութեամբ. «Բացակայող աշակերտներին խն-

*) Զէ՛ որ մեծամասնականների եւ վարչութեան ամբողջ մերկութիւնը կը բացուի, ի՞նչպէս մարդիկը համաձայնեն:

դիրը պէտք է պարզաբանուի դպրոցական կարգապահութեան տեսակէտից. միայն Փօլեանի վերաբերեալ հաստատապէս կարելի է տեսլ, որ նա բոյկոտի տեսակէտով չի եղել դասերին. ում դասին դամ, չգամ, պ. Լ. Գեանջեցեանի դասին չեմ գայ, ասել է նա»—միւսներն մասին յայտնի չէ, քանի որ պաշտօնական հոգի վրայ չի լուսաբանուում նրանց յանցանքը, որպէսզի պարզուի արդեօք բոյկոտի տեսակէտով, թէ ուրիշ պատճառներով նրանք չեն եկել որոշ դասերի, ուստի ինքը անկարող է մասնակցել քուէարկութիւններին ու մ'նում է ձեռնպահ»։ Այնուհետև մ'նացած մեծ. 10 մանկավարժները—որոնք որ 31 ժողովում որոշել էին, որ բարձր գասարանցիներին կարելի է միմիայն երկու առարկայից վերաքննութիւն տալ, այս դէպքում—բոյկոտ անողներին պատիժ որոշում են, որ կարող են չեղած 3—4 առարկաներից վերաքննութիւն ունենալ»։

Ահա ձեզ Դ. Հ. Թ. Դ. վերջին մանկավարժական մօզնի սիստեմները։

Անվերջ ու գազաթնակէին հասցրած այդ տեսակ ժանտահոտ մանկավարժ. գործողութիւնները տեսնելուց յետոյ—դեռ ևս մ'նալ այդ դպրոցում և ծառայել այդ փեշաքետ մանկավարժներին հետ—դա առնուադր մեր կողմից կը լինէր ստորութիւն. ուստի և անմիջապէս այդ օրը՝ մայիսի 28-ին մի համառօտ յայտարարութեամբ յայտնում ենք Հոգաբարձութեան մեր հրաժարման մասին. իսկ հրաժարուելու պատճառաբանութիւնները խոստանում ենք տալ մի քանի օրից յետոյ։

Դեռ չէինք ազատուել հայդուկային մանկավարժութեան շէմքնող տեսակէտների տպաւորութեան ազդեցութիւնից, երբ մի քանի օր յետոյ ժայռի № № 3, 4 կարգում ենք մանկավարժական ժողովի 18 և 20-րդ արձանագրութիւնների ազաւազուած բանաձեւերը և Մանկավ. ժողովի անունով սարքած շինծու գրութիւնը։ Այս հրապարակային ստախօտութեանն էլ միաժամանակ հետևում է «Արձանագրութիւնների վերջնական անյայտացնելը», (եւրեի նրա համար, որ հրէշային գործողութիւններին պատկերը ամբողջանայ։

Այս անբարոյական առարկութիւններն և շարլատա-

նութիւններն մասին 33 ժողովում պահանջում ենք բացատրութիւն և սրբաբանութիւն։ Խայտաբղէտ գործունէութեան սովոր պ. Զիլինկարեան դրած հարցերին պատասխանում է իւր անամօթ փախուստով։ Մենք, այնուամենայնիւ արդարութեան ու ճշմարտութեան համար շարունակում ենք մեր բարոյական կռիւը. ուստի անմիջապէս Հոգաբարձութեան նախագահի միջոցով—հրաւիրել ենք տալիս հոգաբարձական արտակարգ ժողով, ուր պէտք է բոլորի ներկայութեամբ բացատրութիւն տալ Պ. Զիլինկարեան. ա) թէ ո՞րտեղ է թագցրել արձանագրութիւններն մատենանք և բ) թէ որտեղից է ծնունդ առել ժայռի կեղծած բանաձեւերը և Մանկ. ժողովի անունով սարքած շինծու գրութիւնները։

Այս իմաստով նախագահը հրաւէր է ուղարկում։ Ոչ ոք չէ չէ ներկայանում ժողովի և դրա համար էլ ժողովը չգումարուեց, սակայն մենք բողոքաւորներս, նոյն երեկոյցեան Յունիսի 4-ին մեր բանաւոր բողոքը վեր ենք ածում գրաւորի—ամիսիւնով յիշեալ կէտերը, մեր պատճառաբանեալ հրաժարականի հետ տալիս ենք Աշոտ եպիսկոպոսին և երկուսի համար էլ առնում ստացական։ Հոգաբարձութեան և Տեսչի դէմ ուղղած բողոքին ստորագրում են 6 ուսուցիչ։

Բողոքագիրն ու պատճառաբանեալ հրաժարականներս տալուց յետոյ—գրեթէ բոլոր բողոքաւորները, բացառութեամբ Մանկավարժ. ժողովի քարտուղարի և Յ. Տ. Յակովբեանի, հեռանում են քաղաքից։

Մանկավ. ժողովի քարտուղար պ. Հ. Խ. մի երկրորդ մատենան մէջ արտագրելով մ'նացած ամենազլխաւոր արձանագրութիւնները (29—33) յանձնում է պ. Զիլինկարեանին և նրանից ստանում է հետեւեալ ստացականը թէ առաջին և թէ նոր յանձնուած մատենաների համար։

Ս Տ Ա Յ Ա Կ Ա Ն

Ստացայ Մանկավարժական ժողովի քարտուղար Հայկ Խաչատրեանից Մանկավարժական ժողովների արձանագրութիւնների առաջին և երկրորդ մատենանը։

Տեոուհ Ղարաբաղի Հայոց Թեմական Դպրանոցի Ա. Զելինկարեան 1907 թ. 6 յունիսի. Շուշի:

Ուրեմն—ընթերցողը տեսնում է, թէ մի է դողացել և անյայտացել Մ. Ժ. մատենանը և ի՞նչ դիտաւորութեամբ լինելն էլ պարզում է մեզ Ժայռի կեղծ ու շինծու բանտ—ձեւերն ու գրութիւնները:

Այս բոլոր անօրինութիւններէ, ապօրինութիւններէ, գրական շաղկապանութիւններէ նկատարագիւր տալով հանդերձ, մեր պատճառաբանեալ հրաժարականը բովանդակում է իւր մէջ մի քանի կարեւոր կէտեր ևս, որոնք տեղի սղութեան պատճառով չկարողացանք այս նիւթի հետ շարադրել, ուստի նիւթը ամբողջացնելու համար կարել էր համարում մեր հրաժարականը ևս մէջ բերել:

Ահա այդ հրաժարականը.

Ղարաբաղի Հայոց Թեմական Դպրանոցի մեծարգոյ Հոգաբարձութեան

Նոյն Դպրանոցի ուսուցիչներ՝ Մատթէոս Տէր Մկրտչեանից, Յակովբ Յովհաննիսեանից, Հայկ Խաչատրեանից և Յակովբ Տ. Յակովբեանից*):

Յ ա յ Տ ա ր ա ր ու թ իւ ն.

«Մենք մեր համառօտակի հրաժարականի մէջ խոստացանք տալ մեր գրաւոր պատճառաբանութիւնները: Արդ ներկայացնում ենք այն բոլոր այլանդակութիւնները, որոնք ստիպելին մեզ թողնել Ղարաբաղի Հայոց Թեմական դպրանոցը:

Բոլորեց ուսումնական այն վտթորկալի տարին, որի յառաջխաղացման ընթացքին այս կտմ այն կերպ մասնակից ենք հանդիսացել մենք, իբրեւ դպրոցի դասատու ու-

*) Մեր պաշտօնակից եւ ընկեր Յ. Պետրոսեան, որ ինչպէս ընթերցողը գիտէ, մեր օպագիիցիայի անդամ է, պիտուորագրութեան ենթակայ լինելու եւ թեմ. դպրոցում ուսուցչութեամբ աղատուելու պատճառով ստիպուած է լինում չհրաժարուել, մինչև որքան ալ գործողութեամբ պաշտօն գտնի, եւ սեպտեմբերին ուսուցչական պաշտօնով հրաւիրուած է Եջմիածնի սեմարան:

սուցիչներ, իբրեւ մանկավարժական ժողովի անդամներ: Ի՞նչ է ներկայացնում այդ ուսումնական տարին: Լաւագուշակ էր նա իւր սկզբնական շրջանում, երբ մանկավարժական ժողովը դեռ նորանոր էր ձեւակերպում իւր ունենալիք գործունէութեան ընդհանուր ղեկավարող սկզբունքները և այդ սկզբունքներն իրագործող գործելակերպը:

Իդէալիզմի և դեմօկրատիզմի շրջանումն էր, որ մանկավարժական ժողովը մի ամենաչնչին ժամանակամիջոցում (սեպ. 12—նոյեմբ. 5) ունեցաւ 16 ժողով: Եւ այդ շրջանում էր, որ ժողովի նախագահը հրապարակով յայտարարում է (6-րդ նիստ սեպ. 22), «որ չոր ու ցամաք պաշտօնական եղանակը չէ, որ զարկ է տալու դպրոցի» յառաջադիմութեան և բարգաւաճման, այլ ընկերական անկեղծ ու անաչառ վերաբերմունքը, որով քմահաճոյքն ու ետք արմատախիլ է լինում և իշխում է ընկերվարական—ընկերական ոգին». նոյն երջանիկ ժամանակներումն էր (7-րդ նիստ) որ մանկավարժական ժողովը դառնում է, թէ Հոգաբարձութիւնը և ուսուցչական խումբը անջատ մարմին չպէտք է կազմեն. պէտք է ձգտել, որ Հոգաբարձութիւնը սերտ կապերով կապուի դպրոցի հետ, ընդունուած է նաեւ, որ մանկավարժական ժողովին մասնակցել կարող են ոչ միայն Հոգաբարձուները, որպէս հասարակութեան անդամներ, այլ և աշակերտներն ծնողները, հասարակութիւնից ցանկացողները և յետագայում (16-րդ ժողով) ընդունուած է նաեւ, որ ծնողական—մանկավարժական և պատժական ժողովներն մասնակցել կարող են նաեւ 2. դասարանի բոլոր աշակերտները, իսկ Գ.—2. դասարաններն զատարանական ներկայացուցիչները, նոյն ժողովում զատարանական ներկայացուցիչները, իսկ Գ.—2. դասարաններն պաշտօնապէս որոշուած է, որ աշակերտին վերաբերեալ ամեն մի խնդիր պէտք է լուծուի ծնողական—մանկավարժական ժողովում:

Մանկավարժական ժողովի այդ շրջանի իդէալիզմի և դեմօրատիզմի quint essentia-ն այն կէտն է հասնում, որ անհրաժեշտ է համարուած միահամուռ ոյժերով ղեկադրել հոգաբարձութեան, եթէ վերջինս կկամենայ մանկավարժական ժողովի իրաւունքները ոտնակոխ անել: Այս առ-

քննութիւնները վերացման ժամանակ պ. նախագահը առաւելում է, որ ժողովը պէտք է տակաւոր տանել և չպէտք է ձայները հաւասար լինելու մասին հարց բարձրացնել, եթէ Հոգաբարձուները բարձրացնեն այդ հարցը, ուսուցչները պէտք է աշխատեն առաւելել «յօդուտ իրենց»։ Մինչև անգամ քանի աշխատեցին հասնում, որ ուսուցչները շատերը դուռում են «կռիւ Հոգաբարձութեան դէմ» և վերջը յանգում են այն եղբայրացութեան, թէ կան խնդիրներ, որ պէտք է միմիայն մանկավարժական ժողովին պատկանին, և այդ խնդիրները մէկն են համարում աշակերտի արձակման խնդիրը (7-րդ և 12-րդ ժողով)։

Ընկերականութեան սկզբունքը հասունութեան դաժնակէտին է հասնում, և նախագահը սիրով է ընդունում, թէ տեսուչը պէտք է հետևի դասերին և այդ հետադատութեան արդիւնքը դադարի չպէտք է մնայ մանկավարժական ժողովին համար (9-րդ ժողով)։ Ընդունելով հանդերձ այս սկզբունքը և այն առաջարկը, որ եթէ տեսուչը կարող է իւր տպաւորութիւնները ժողովին զեկուցել, նոյնը կարող են անել և մի քանի ուսուցչներ։ Համաձայն այդ հայեցակէտի պ. նախագահը յայտնում է, որ այդ տեսակ հետադատութեամբ կը վերանայ տեսչի ղեկուցարարութեան լիազօրութիւնը, որի շնորհիւ իւրաքանչիւր որոշում կրում էր միակողմանի և անհատական ընտրութիւն (9-րդ ժողով)։

Ընկերամոլութեան և աշակերտամոլութեան ցաւով էր բռնուած մանկավարժական ժողովը—մինչև 1906 թ. նոյեմբերի 9-ը, այդ դպրոցական պատմական հիմնադրոյն։ Դրանից յետոյ տեսարանը փոխուում է։ Այն փութիւտ նախագահը, որ ամենատարբեր խնդիրները համար 1 1/2 ամսուայ ընթացքում 16 ժողով դումարեց, այն նախագահը, 47 աշակերտի հեռանալու օրից մի երկու օր առաջ մի կիսատ աղատ ունենալի և մի քանի աշակերտները դասամիջոցին կատարած առաջին դմիտի խնդրի առթիւ 17-րդ ժողովը դումարեց և մինչև իսկ վճիռ արձակեց 16-րդ ժողովին որոշման հիմնովին դէմ, այդ նոյն նախագահը հանգիստ նստած էր այն ժամանակ, երբ ամբողջ դպրոցական կեանքը ալեկոծման մէջ էր, երբ

դպրոցը փակման էր ենթարկուում, երբ մի կողմի աշակերտները փողոցներում դէնքով վրէժխնդիր լինել են կամենում բողոքաւոր աշակերտներից (22-րդ ժողով), երբ որոշ դասարաններ դասատու ուսուցչին չեն ուղղում, դուռն են անում դասարանից (Բ. և Գ. դաս.) երբ մի խումբ աշակերտներ մի քանի որոշ ուսուցչներին դասին դիտաւորեալ կերպով չեն յաճախում, երբ տեսչի իրեն երեսին պաշտօնական որոշումը յայտնելիս պատասխանում է աշակերտը «ուսուցչի դասին չի գալիս, որովհետեւ արհամարհում է այդ ուսուցչին» (30-րդ ժողով)։ Վերջապէս նախագահը լուռ է և իւր նախաձեռնութեամբ չէ դումարում ժողով և այն ժամանակ, երբ դպրոցի Գ—2 դասարանները փակում են, 47 աշակերտ հեռանում են դպրոցից (19-րդ ժողով)։ Այն իդէալիստ և լիբերալ ընկերները, որոնք մի քանի օր առաջ որ և է որոշում կայացրելու համար ուղղում են իմանալ, թէ ինչ պատճառներով հիման վրայ պ. Մեքլընեան, առանց առիթի հրաժարական է տալիս և հրաժարականը ընդունում է, նոյն այդ պարոնները աւելորդ են համարում միանգամայն հետաքրքրուել, թէ ինչու են հեռանում 47 աշակերտները (19 ժողով) և դէպի աշակերտութիւնը դիրք որոշելու համար բաւական են համարում միայն պ. Մեքլընեանի տուած բացատրութիւնները։ Տարօրինակութիւնը մինչև անգամ այն տեղն է հասնում, որ ժողովի անգամներից մէկը թոյլ է տալիս իրեն ասելու, թէ «բացատրութեան համար դիմել աշակերտութեանը ժողովը իւրաքանչիւր դէպքում կարող է քուէարկութեամբ որոշել, թէ կարելի է ղեկումը, թէ ոչ (19-րդ ժողով)։

Ամեն ինչի համար քննութիւն պահանջող, դպրոցական ցաւով հետաքրքրող և հոգաբարձութեան և ուսուցչութեան միջև անջրպետի վերացման նախաձեռնողը պ. նախագահը և այն դէպքում (20-րդ ժողով), երբ կարելի է լինում իմանալ ա) 70 աշակերտների դասադուլի դրդելը բ) պ. Մեքլընեանի հրաժարականի պատճառական կէտերը, գ) քննութիւն պահանջող հոգաբարձութեան պ. Մեքլընեանի հրաժարականն ընդունելու պատճառներով թիւնը, պ. նախագահը խիստ սառնասրտութեամբ կրկը

նում է. «Ենչ է որոշել հոգաբարձութիւնը, այդ մանկա-վարժական ժողովին համար կարենք չէ խմանալ»:

Սրանով սկսում է հակասկզբունքային շրջանը:

Ընկերավարական դադարի արեւելքի խօսքով պաշտպան նախագահը առանց դժկամակելու կատարում է հոգաբարձութեանը խիստ անպատուաբեր այն պահանջը, որով հոգաբարձութիւնը կամենում էր խմանալ 18-րդ ժողովում քուէարկած լուի 3 բանաձեւին ձայն առնող ուսուցիչներին անունները: Որքան դարմանալ կարելի էր ձեր այդ տեսակ վերաւորական պահանջի նկատմամբ, առաւել էս արօքնակ ա անբացատրելի էր ուսուցչական խմբի բաժարձակ լուծութիւնը և նախագահի այդ տեսակ պահանջի համեմատ լինելը, այն նախագահի, որը իդէալիզմը շրջանում գո-ւում էր «միահամուռ ոյժերով զիմադրել հոգաբարձութեանը, եթէ վերջինս կը կամենայ ստանալու անել ման-կավարժական ժողովին իրաւունքները» (7-րդ ժողով):

Երէկ պահանջում էր աշակերտին վերաբերեալ ամեն մի խնդր մանկավարժական — ծնողական — հոգաբարձական խառն ժողովում լուծել (16-րդ ժողով), այսօր ընդհակառակը (17-րդ ժողով), երէկ արհամարում էր իշխանական ձեւը, այսօր սանկցիա է տալիս այդ ձեւին: Այլապէս ման-կավարժոյրը սկսում է աստիճանական կարգով բացուել: Ժողովները՝ դպրոցական ամենախիթութեամբ շրջանում դա-դարում են: Ժողովները փակուում են դեկտեմբերի (1906 թ.) վերջերից — մինչև փետրուարի 7-ը:

Այդ այն անմիջական ժամանակամիջոցն էր, որ դպրոցի Գ.—2. դասարանները — հոգաբարձութեանը ազդի հիման վրայ փակուած էր և աշակերտութիւնը շարունակւում էր փոքր:

Ի՞նչ էր ներկայացնում մեր ընկերավարական կողմը: Այդ ժամանակ Կոնֆրոմերստ կազմը վեր էր լուծուել թայ-ֆային: Երեկուայ մեր ընկերավարականները — Մեքլոնեանի գէպրից յետոյ, տեսչի գեկավարութեամբ կազմում են մեծամասնականներ մի բանակ, առանձնանում են տեղ-չանոց, ամենասառը օֆիցիալ յարաբերութիւն են քաղաք-աշխարհի մեզ: Ցետադայ, 29-րդ ժողովում, պ. Գրեգորեան պաշտօնապէս յայտնում է. «Ուսուցիչներին մի փոքր չկա-

րողանալով յարգել հակառակորդներին տեսակէտները, թոյլ են տուել իրանց մի քայլ, որ վայել չէ մանկավարժներին: Նրանք ժողով են արել և որոշել են բոլորի կենթարկել իրանց հակառակորդներին, որոնք Մեքլոնեանի խնդրում արժարժեցին իրանց տեսակէտները և պաշտպան չհանգի-սացան նրան»:

Մեր մանկամիտ հակառակորդները մէ միայն այժմ, իրողութիւնը բացուելուց յետոյ քաջութիւն չեն ունե-նում խոստովանելու, այլ նոյն այդ թուլամորթները իրենք երկու ամիս յետոյ, փետրուարեան ժողովներում — առանց պատկառելու յայտարարում էին, որ Մեքլոնեանի դործն իրանց համար պարզ չէ (23-րդ ժողով փետր. 23.) և ակ-նարկների առթիւ եղած առաջարկին դրական կեցով պատասխանում են՝ «որ մեղադրանք չունին ասելու և գէթ մի ամենաչնչին փոքր էլ չունին մեղադրելու»: Նկուղային դործունէութեան սովոր մեծամասնականները խուսափելով ճշմարտութիւնից և վարագուրելու համար իրենց սե ու մութ սերագործութիւնները, մանկավարժա-կան անբարեխղճութիւնը, ինչպէս միշտ, այնպէս էլ այս դէպքում, անշուշտ մասների ուժով որոշում են քննել այդ դործը մայիսի 20-ից յետոյ (29-րդ ժողով մայիսի 11): Նոյն այդ անգիտակից մասների շնորհիւ խնդիրը ձգձգ-ւում է մինչև օրս (32 ժողով) և 33-րդ ժողովում, երբ պահանջում է 32-րդ ժողովի որոշման համաձայն բոլորի խնդրի քննութեան անցնել — մեծամասնականները ամօ-թահար եղած, կորագլուխ անմիջապէս թողնում են ժո-ղովը և փախչում:

Մասնային թագաւորութիւնից օգտուելը մինչև այն աստիճան է հասնում, որ քուէարկութեամբ է որոշում արձանագրութիւններ կարգաւոր կամ չկարգաւոր խնդիրը (ժողով 30-րդ): Նոյն մասնային թագաւորութեան որդի-ներն էին, որ օգտուելով հոգաբարձութեանը ազդից և գլուխ ունենալով տեսչին՝ սիրով ընդունում են դպրոցի փակումը և Ղուկազի թաղում Այդինեանի բնակարա-նում, Մեքլոնեանին պաշտպանող մի քանի աշակերտների համար բաց են անում մի «Մասնաւոր Գպրոց», այդպիսով, դպրոցի նորմալ կեանքը վերականգնել ցանկացող մասնա-

կանները, աշակերտութեան և պ. Մելքոնեանի մէջ հաշտութեան գաղափարը quasi իրադրոճել ցանկացող մեծամասնականները պատճառ են դառնում աշակերտական պառակտման զօրեղացման և բարձրացնում ատելութեան աստիճանը:

Լուռ մատների ամենազօր ոյժն էր, որ անուշադրութեան և արհամարհանքի արժանացրեց այն ցանկութիւնը, «որ հողաբարձութիւնը Մելքոնեանի դէպքի վերաբերեալ կայացրած ժողովները պէտք է անէր խառն մանկավարժական ժողովի հետ» (20-րդ ժող.): Այդ անկեղծ մատները արդիւնքը պէտք է համարել և այն, որ մեծամասնական պատուելիները (32-րդ ժողով) քննութեան են ենթարկում ազատ ունկընդիր Վարդանեան Եսայուն, Պետրոսեան Տիգրանին և այն առարկաներից, որոնցից յունուարին յաջող քննութիւն էին տուել և այն առարկաներից, որոնցից բոլորովին չէին քննուել, իսկ 5 ըսպէ՛ յետոյ, երբ նոյն ժողովում (32-րդ ժ.) տեսչի ազդեական ազատ ունկընդիր Մուրադեան Աբգարի մատին պ. Զելինկարեան և մեծամասնականները առանց ամաչելու յայտնում են, որ որ Մուրադեան Աբգարին տարուայ մէջ ուսուցիչներէից շատերը դաս են հարցել և բաւարար են համարում, հետեւեալ չքննուած առարկաների համար պէտք է բաւականաւ դատատունների տպաւորութիւններով: Ծայրահեղ անարդարութիւնը չկարողանալով լիովին ի կատար ածել եղկելի մատնականները—վերջում բաւականանում են նրանով, որ Մուրադեան Աբգար չքննուած առարկաներից պէտք է քննուի յունուարից աչս կողմ անցած կուրսից:

Նոյն մատներով հպարտացող մանկավարժներն են, որ դպրոցական ղեկսիպլինան ղեկաւորեալ վերադով խանդարող, ուսուցիչներին բոյկոտի տուող դանաղան Փօլեաններ և Նարինեանների պաշտպանելու և արդարացնելու համար—մանկավարժին յատուկ վայելչութիւնից իջնում են ամենազօր սոփեստութեան, պնդում են, որ մանկավարժութեան մէջ բարոյականութիւն, բարոյական հեղինակութիւն և գիտութիւնը միմեանցից բոլորովին անկախ բաներ են. ստորանալով դալիս կանգնում են այն համոզ-

ման, որ աշակերտը կարող է ուսուցչի երեսին թքել, անարդել, այսուամենայնիւ այդ հանդամանքը բնաւ արգելք չի կարող լինել, որ ուսուցիչը շարունակէ այդ աշակերտին դաս տալ, դաս հարցնել և քննել: Նոյն Պ. Պ. էին, որ վախկոտաբար փախան Նարինեանների չդաւու խնդրի քննութեան արդիւնքը լսելուց, բայց միեւնոյն ժամանակ նոյն բարոյական մանկավարժները չղլացան ամենածայրահեղ անարդար վիճիւ կտրելուց: Այն աշակերտները, որոնք ամբողջ տարին կանոնաւոր յաճախէ էին դպրոց և պարտադանց չէին դանուել իրանց պարտաւորութիւնների մէջ, այդպիսիների համար որոշեցին վերաքննելի տալ միայն երկու առարկաներից, իսկ դանաղան Փօլեանների և Նարինեանների համար, որոնք ղեկաւորեալ կերպով չէին յաճախել դպրոց մի քանի որոշ ուսուցիչներին դասին 6 ամիս շարունակ բոյկոտի ղեկաւորութեամբ, որոնք մանկավարժական ժողովի կողմից տարուայ սկզբին աշակերտ էին ընդունուած որոշ պայմանով, որ լինի ճշտապահ և պարապի, «հակառակ դէպքում կը հեռացուի դպրոցից» (7-րդ ժողով), այդ տեսակներին ոչ միայն ոչ մի պատիժ չէին տալիս, ընդհակառակը առանձնապէս արտօնութիւն է տրուում այդ տեսակներին 3—4 առարկայից վերաքննելի տալ (32-րդ ժողով): Ահա թէ ինչով էին ղեկավարուում մանկավարժները:

Մի նմուշ կարող է ծառայել Աւետիս Գասպարեանի խնդիրը: Գպրոցական բարելաւման նախանձախնդիր և թայֆայականութիւնից խուսափող մեծամասնականները հոկտեմբերին (5-րդ ժող.) որոշում են «առանձնապէս աշակերտ Աւետիս Գասպարեանին թոյլ տալ ազատ ունկընդրութիւն չի կարելի»: Եւ պա մի երկար ու բարակ քննութիւնից յետոյ հետեւեալ ժողովներից մէկում, որոշ պայման կապելուց յետոյ ասում է «կարելի» է. փետրուարի 23-ին (25-րդ ժողով) երեւում է, որ ազատ ունկընդիր չընդունող Տեսուչը համարել է Գասպարեանին աշակերտ. այդ մատին հանդիմանութիւն է լինում պարոն Զելինկարեանին, բայց վերջինս փոխանակ դադարելու ապօրինութիւն գործելուց, ընդհակառակը շարունակ համարում է Գասպարեան-

նին աշակերտ, անունը գրում է ընդհանուր մատենանում, աշակերտների ցանկում:

Աս նրա ապօրինի գործերից առաջինը չէ, ապօրինի գործերից է նաև այն, որ պ. Մ. գործի պատճառով դպրոցից հեռացող 47 աշակերտներին տուել էր վկայականներ մանկավարժական ժողովի անունից, բայց նրանից ծածուկ: Այս մասին էս իւր ժամանակին՝ պաշտօնական ժողովում խիստ նկատուել է պ. Չիլինգ. (28-րդ ժող.), սակայն դոյնանման գործեր կատարելը ակորթելի է թւում պ. նախագահին: Եւ ահա սրանից մի քանի ամիս առաջ նոյն նախագահը դարձեալ մանկավարժական ժողովի անունից, բայց նրանից ծածուկ, 6-րդի աւարտման վկայական է տալիս Քերայէլ Թիւնիբէկեանին, որը իբրեւ աշակերտ քննութիւն էր տուել 1906 թ. դէկ. ուղ. (32-րդ ժող.):

Այս բոլոր ղեղձումները ուղեք են՝ բռնել—փորձամասնականներու հարցերը, սկզբունքները ժողովում ուղեք են կանոնադրութեանը: Այստեղից մի հարց է ծագում. ապա ինչ է եղել մեծամասնականների դերը: Գրեթէ բոլորի ղէկիցը եղել է մուշն նստել, ոչ մի ուղղութեամբ չառարկել և վերջում միայն եռանդուն կերպով մատ բարձրացնել և խեղդել մարդկային ամենատարրական իրաւունքները (1906—1907 ուսմ. արձգ.):

Մի հետաքրքիր նմուշ ոյդ մասնաբանութիւնից. 28-րդ ժողովում, աշակերտ Տէր Գէորգեանի համար, առաջին անգամ քուէարկում են առանց պատճառաւորութեան ընդունել գրան աշակերտ և ընդունում է այս առաջարկը ձայների բացարձակ մեծամասնութեամբ. ապա երբ փորձամասնականներս բողոքում են, որ բաւական է մասներով խնդրը լուծել, թող իւրաքանչիւր ժողովական պարզ է, թէ բանն ինչումն է, ահա այդ միջոցին համաձայնում են 2-րդ անգամ քուէարկել. վերջին անգամ միաձայն վճռում են, որ այսինչ այնինչ պատճառաբանութեան հիման վրայ միայն մանկավարժական ժողովը որոշեց ընդունել դրան աշակերտ. այսպէս էին գործում անխօս մասները ամբողջ տարուայ ընթացքում, և այն դէպքում, երբ դպրոցում Մեքենեանի հրաժարականի պատ-

ճառով դասադուլ էին յայտարարել 2-րդ դաս. և բարձր դասարանցի մի քանի աշակերտներ, այդ դէպքում մանկավարժական ժողովը կամենում է իւր դիրքը որոշել դէպի այդ աշակերտները: Մենք փորձամասնականներս հաւատարմի մնալով նախկին ժողովներում յայտնած սկզբունքներին՝ մեր դիրքը անշեղ կերպով որոշելու համար անհրաժեշտ համարեցին իմանալ Ա. դասադուլին սկզբունքով հակառակ աշակերտները ինչից դրդուած դիմում են դասադուլի. Բ. ինչ հիման վրայ պ. Մեքենեան հրաժարական է տուել. Գ. ինչ պատճառաբանութեամբ քննութիւն պահանջող հոգաբարձութիւնը ընդունել է պ. Մելք. հրաժարականը:

Մեր խորը համոզմամբ որովհետեւ այդ հարցերին պատասխան տալ կարող են պարոն Մելքոնեանի հրաժարականը և դասադուլ անողների պատճառաբանութիւնները գրաւոր, ուստի և մենք պահանջեցին այդ դիմումները:

Մեծամասնականները զրկեցին մեզ այդ հնարաւորութիւնից և այսօր էլ 33-րդ ժողովում, այդ նոյն մեծամասնականները պապանձուել են և չեն խօսում, երբ իրենց աչքով կարդում են ժաշուի մէջ, թէ ինչպէս մեր ժողովները որոշումները, այն էլ աղաւաղուած տուած է պ. Մելքոնեանին մեր փորձամասնականներիս դէմ կուռելու: Գեռ չենք յիշում այն ապօրինի անտարբերութիւնը, որ ցոյց տուեց դպրոցիս վարչութիւնը և այն դէպքում, երբ մի քանի ամիս սրանից առաջ մամուլի միջոցով հրապարակով պահանջեցինք երկու վարչութիւններից լոյս ընծայել Մեքենեանի գործին վերաբերեալ այն բոլոր փաստաթղթերը, որոնք գտնուում են երկու վարչութեանդ արխիւում: Ամեն մի անարգար պահանջի դէմ բողոքողը եղել ենք մենք, փորձամասնականներս, մեծամասնականները ամեն դէպքում էլ վարագուրել են իրենց կեղտոտութիւնները մատներով: Մասներով էր, որ նոյնպէս խեղդեցին իրենց՝ մեծամասնականների մանկավարժական անբարեխղճութեան գործի քննութիւնը: Բարեբախտաբար 29-րդ ժողովում ուսուցչինքնից մէկը ժողովի քննութեան դրեց, թէ ինչպէս պ. մեծամասնականները 1) չանցած առարկայի համար թուանշան են դրել. 2) դաս չհարցրած աշակերտին

Թուանշան են դրել: 3) դասը աշակերտին հարցնում են վիճակով, եւն: Եւն: Փախուստ տուին և այս դատից, փախուստ տալ կամեցան և այն դէպքում, երբ պարզորոշ կերպով նկատուեցաւ, որ Թուանշանները դրած են աշակերտներին սիրաշահելու համար և ոչ զնահատելու, իրենց Թերութիւնները ծածկելու, և ոչ թէ դպրոցը բարեւաւելու (30-րդ ժողով):

Այս ամենից յետոյ մնում էր որոշել, թէ արդեօք կարելի է այս տեսակ պայմաններում ծառայել,— թէ ոչ: Մենք դառնալ այդ անհնարին, որն համար և ներկայացրինք մեր հրաժարականը:

Թուել մի առ մի մեր ենիչերի մանկավարժները արարելները գրեթէ անհնարին է: մեր նպատակն էր ընթերցողին Թուցիկի գաղափար տալ իրականութեան մասին և լոյս աշխարհ դուրս բերել հացկատակները ինքնատիպ մանկավարժութիւնը և դարձ արարքները, որ չափով դրանք կապ ունեն դպրոցի հետ: Իսկ նոյն այդ շահամուլները դպրոցական կոնֆլիկտի հետ կապ ունեցող, բայց դպրոցական խնդրից հեռու աւելի մութ, աւելի քստմնեցուցիչ արարքները, խարդաւանքները, դաւերը (որ մնում են միջնորդ դատարանի արձանագրութիւնների մէջ իբրեւ փաստ) աւելորդ համարեցինք հրապարակ հանել: Մեզ մասնաւորը չէ հետաքրքրում, որքան էլ աւելի ձեռնտու լինի հակառակորդին սևացնելու համար, այլ ընդհանուրը, հասարակականը:

Մենք մեր խօսքը առայժմ վերջացրինք:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆ
1924 թ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆ
1924 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0233578

51. 307

